



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

34^{րդ} ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾՍԿԱԼՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂԶ ԴԱՍԸՆԹԱՅԲ
ՀԱՄԱԿԵԴՐՈՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆՈՐ ԴՊՐՈՅ

Բարոյագիտութ., Բարոյագ. Կրթութիւն, Պատմութ.,
Աշխարհագրութիւն, Թուարաւնութիւն, Երկրաչափութիւն,
Գիտական Ուսումներ, Մայրենի լեզու.

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ

Տարրական ընկալցի

Ը. ՊՐԱԿ

ԳԻՐԲ ԱՇԱԿԵՐՏԻՆ

اشبو مکتب جدیدنام اثر معارف نظارتینک فی ۲۱ سنه تشرین اول ۱۳۱۰ تاریخلی
و ۴۵۰ نومرولی رخصتاً ۴-یله و سیمپا داداویان معرفتیه ترتیب و طبع اولمشدر

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Չ

ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ

491.99-8
7-23



Կ. ՊՈԼԻՍ

ԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՄԻՆԱՍԵԱՆ
Խորան-Համրոմ Թիւ 14

1902



MAR 2013

MAR 2013

8215

1005-10

49199-8 ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

— 0 —

7-23

ՔԱՂՅՐ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱՐ 1. ԽՅՈՒՎՑՈՒԹԻՒՆ. — Բարկուրքիւնը վստահաւոր բան է. — Բարկանայը գէշ բան է: Բարկացած առեւ, մարդ շատ անգամ ա՛յնպիսի ծանր բաներ կ'ընէ որ յետոյ սաստիկ կը զղջայ: Բարեկամներէս մէկը անցեալ օր պատմութիւն մ'ըրաւ ինձի: Մեր դրացի տղան, ըսաւ, թէ եւ շատ պզտիկ, բայց սաստիկ բարձրացոտ է, ամենաչնչին պատճառով կը զայրանայ, աչքերը կը դառնան, դէմքը կը կապուտանայ: Անցեալ օր մայրը գործի մը համար դուրս ելած ժամանակ, պզտիկ աղջիկն այդ եղբոր հրակողութեան կը յանձնէ. պզտիկը կը սկսի գետնի վրայ քսուիլ և ձեռքերը կ'երկնցնէ հոն՝ աթոռի մը վրայ՝ դուռն ա՛յ պզտիկ գիրքը առնելու համար: Եղբայրը կը բարկանայ՝ քանի մ'անգամ կը պոռայ քրոջը, բայց պզտիկ երախտն ի՛նչ կը հաւկնայ անոր ըսածը: Վերջապէս պզտիկը կարծիք գիրքը վար կ'առնէ աթոռէն, իսկ առգին եղբայրը՝ կատղած՝ ուժով մը մէկ կողմ կը հրէ քոյրը: Խեղճ պզտիկը մէջքին վրայ կը դառնայ և գլուխը վառարանի սուր անկիւնին կը հանդիպի, կը ձեղքի և արիւնը կը սկսի հոսիլ: Վէրքը ծանր էր, քոյրը մեռաւ: Իսկ բարկացոտ տղան հիմա ամէն օր իր մարութեանը վրայ կուլայ և չեմ յուսար որ ամբողջ կեանքին մէջ մտնայ այս բանը:

646

- 1. Առած. — Բարկուրքիւնը կարճատեւ խեղդութիւն է:
- 2. Առած. — Անխուս մարդիկ միայն ուրիշները կը նախատեն:

Նոր Դարացի, Ը. Պրիտ



2. ԽՍՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Ներողամտութիւն. — Պէտք է ներողամիտ ըլլալ: Մարդիկ եթէ իրարու յանցանքներուն չնորոգեն, պիտի չկրնային մէկտեղ ապրիլ: Շատ անգամ դպրոցական տղաքներն են որ չնչին բաներու համար իրարու կը հակառակին և իրարու դէմ ռի կը պահեն:

Օր մը, դասամբլոցին, դասարանի մը տղաքը սկըսան իրարու հետ վէճ ընել: Կէս մը կ'ըսէին թէ պէտք է պատուհաններ բանալ որովհետեւ տաք է, միւս կէսը կը պնդէր թէ պէտք է գոց պահել, որովհետեւ ցուրտ էր: Ու այս պատճառաւ իրար կը քաշքշէին, կը հրմշտըկէին, մէկը բանալ կ'ուզէր միւսը գոցել, դասարանին մէջ սոսկալի աղմուկ մը:

Ուսուցիչը ներս մտաւ, ամէնքը լռեցին: Երբ պատճառը հասկցաւ, ըսաւ անոնց, «Իրա՛ւ կը զարմանամ որ այսպէս չնչին պատճառի մը համար իրարու հետ կռուելու ելած էք: Ձեզմէ մաս մը կ'ուզէ որ օգը զով ըլլայ, շատ լաւ՝ անոնք թող սա ղերի պատուհանին առջեւ ժողվուին ու զայն բաց պահեն, միւս մասը կ'ուզէ որ տաք ըլլայ, թո՛ղ սա վարի պատուհանին առջեւ հաւաքուին ու գոց պահեն զայն: Այսքան մը բա՛ն ալ չի կրցաք խորհիլ: Ամօթ չէ՞ որ այս ոչինչ բանին համար ես միջամտեմ, ես ձեզի խելք սորվեցնեմ: Ասկէ դատ, տեսէ՛ք, դուք ամէնքդ ալ յանցաւոր էք այս պահուս: Բայս ես ձեզի չեմ պատժեր, կը ներեմ, որպէս զի դուք ալ օրինակ առնէք և իրարու նկատմամբ ներողամիտ ըլլաք:

3. Առած. — Ներողամիտ մարդը ուրիշներուն հաւսկրութիւնը կը վաստկի:

3. ԽՍՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ. Բաղցրաբարոյ ըլլալու է. — Աշխատեցէ՛ք, տղա՛քներս, որ անուշ ընաւորութիւն մ'ունենաք: Երբեք մէկուսն վրայ գէշ խօսքեր մի զրուցէք. բարկացոտ, ծաղրող, ետատէր մի՛ ըլլաք, քաղցրաբարոյ եղէք միշտ, այսինքն ամէնուսն հետ անուշութեամբ վարուեցէք: Դիտեցէք թէ ձեր ընկերներուն մէջ որո՞նք ամէնէն աւելի կը դուլուին, կը սիրուին. պիտի տեսնէք որ այն տղաքները, որոնք ազնիւ են, իրենց ընկերներուն վրայ աղէկ կը խօսին, զուարթ և համարձակ են:

Միթէ դուք կ'ուզէ՞ք որ մէկը ձեզ չարչարէ, ձեզի հետ բարկութեամբ խօսի, գործի մը համար կոշտ կերպով ձեզ վռնտէ, ձեր երեսը չնայի, ձեզ արհամարհէ, ձեր ետեւէն ձեզի չար խօսքեր ըսէ: Չէ՛, այս բաները չէք ուզեր: Ուրեմն աշխատեցէ՛ք որ դուք ալ այս տեսակ բաներ չընէք ուրիշներուն, անա այն ատեն քաղցրաբարոյ կ'ըլլաք:

4. Առած. — Բաղցրաբարոյ մարդը արդէն ինքն իրեն բարիք մ'է ընկերութեան մեջ:

5. Առած. — Երբ որո՞ք ձեր եղբայրներուն հետ բաղցրաբարոյ չեի, ի՞նչպէս կրնայի պահանջել որ անոնք բաղցրաբարոյ ըլլան ձեզի հետ:

4. ԽՍՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Միշտ բաղցրութիւն, ամենեւեց խստութիւն. — Պզտիկ Սաթիինիկ սենեակին մէջ իր դասերը կը պատրաստէր: Թուաբանութեան խնդիր մը կար, պէտք էր թիւ մ'ուրիշ թիւէ մը հանել, Սաթիինիկ չէր կրնար, կը նեղուէր: Անշուշտ վարժուհին շատ անգամ այդ դասը բացատրած էր, բայց Սաթիինիկ չէր կրցած միտքը պահել: Անդին մեծ քոյրը, Լուսին, նստած էր, դասերուն կ'աշխատէր: Սաթիինիկ անոր քովը դնաց և խնդրեց որ իրեն սորվեցնէ:

Լուսին, որ քիչ մը նեղ-սիրտ էր, խստութեամբ ըսաւ. «Բե՛ր տեսնեմ քարէ տախտակդ»: — Պղտիկ աղջիկը հնազանդեցաւ և սկսաւ ուրախ զուարթ մտիկ ընել: Բայց Լուսին այնքան արագ կը խօսէր, որ երբ բացատրութիւնը լմացաւ, հարցուց քրոջը. — «Է՛հ, հասկըցա՞ր»: Խեղճ աղջիկը աչքերը կախեց: — «Ես ի՞նչ ընեմ որ չես սորվիր, դուն ծոյլ ես, ես գործ ունիմ. . . նորէն մտիկ ըրէ»: Բայց Սաթինիկ ա՛լ չկրցաւ մտիկ ընել, սկսաւ լալ, հեծ՛կտալ. Խեղճ աղջիկը այնքան զգայուն էր որ քրոջը խիստ խօսքերուն չդիմացաւ:

Նոյն միջոցին մայրը ներս մտաւ ու մեծ աղջկանը նայելով, — Ի՞նչ է այս, հարցուց: — Ես ի՞նչ ընեմ, մայր, ես գործ ունիմ, ու չեմ կրնար Սաթինիկին Թուաբանութեան պղտիկ դաս մը սորվեցնել, չի հասկընար»: Մայրը անմիջապէս հասկցաւ եղելութիւնը և ըսաւ պղտիկ աղջկան. — «Եկո՛ւր, քովս եկո՛ւր, աղջիկս, ես քեզի կը սորվեցնեմ, ինչպէ՛ս ասե՛նով սորվեցուցի մեծ քրոջդ»: Սաթինիկ մօրը քով գնաց: Մայրը կամաց կամաց, անուշ խօսքերով սկսաւ սորվեցնել Սաթինիկին թէ թիւ մը ինչպէ՛ս կը հանեն ուրիշ թիւէ մը: Աղջկան լացը դադարեցաւ, սկսաւ մտիկ ընել և սորվեցաւ:

6. Առած. — Մարդ ինչ որ փայտաբանութեամբ կը սորվեցնէ մեկ օրուան մեջ, չի կրնար խառնութեամբ սորվեցնել մեկ շաբաթուան մեջ:

5. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Բաղքը բնաւորութիւնը օգտակար է մարդուն. — Ես մարդ մը կը ճանչնամ որ այսօր մեծ հարստութեան տէր է և շատ աղէկ անուն ունի: Օր մ'իւր պատմութիւնն ըրաւ ինձի, այսպէս. «Քսան տա-

րեկան էի, երբ հայրս զիս դրաւ հարուստ վաճառակահի մը քով, չնչին ամսականով մը: Այս մարդը սաստիկ բարկացոտ էր, նեղ-սիրտ, և ընաւ անուշութեամբ չէր խօսիր մէկու մը հետ. այս պատճառաւ իր քով աշխատողները երկար չէին մնար և շարունակ կը թողէին, կը հեռանային: Ես ձայն չհանեցի, աշխատեցայ և շատ անգամ, եթէ բարիանար, լուռ կը կենայի: Վաճառկանը շատ բարի մարդ էր սրտով, բայց շատ խիստ ու կոպիտ էր բնութեամբ: Ես լաւ հասկցայ այդ մարդուն բնութիւնը և միշտ քաղցրութեամբ վարուեցայ հետը: Կամաց կամաց սիրեց զիս, աւելի կարեւոր գործեր յանձնեց ինձի, և եկաւ օր մը՝ որ ես բոլոր գործերը կը տեսնէի: Վաճառականը միշտ այն բարկացոտ, նեղ-սիրտ մարդն է, բայց հիմա առանց ինձի գործ մը չի կրնար տեսնել, և ապահով եմ որ զիս իր դաւկին պէս կը սիրէ»:

7. Առած. — Կակաղը կը կտրէ ջուր:

8. Առած. — Յաջողելու առաջին պայմանն է հաւքերէ:

9. Առած. — Հարկերու քիւնը մեզի կը սորվեցնէ տակալ անյիսնասրէջի չարիքներու:

6. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Բաղքը բնաւորութիւնը օգտակար է կնոջ. — Յոյն բանաստեղծ մը, Հոմերոս, կը պատմէ թէ ասե՛նով Պենելոպէ անունով իշխանուհի մը կայ եղեր: Ասոր էրիկը քսան տարիէ ի վեր գացեր էր հեռու երկիրներ պատերազմի, ու դեռ չէր վերադարձեր: Այն քաղաքին մէջ շատ մը երիտասարդ իշխաններ կուգան Պենելոպէին կ'ըսեն որ իրենց հետ ամուսնանայ: Ասոնք կ'ուղէին իշխանուհին իրենց կին առնել որ անոր հարը-

առեթեան տէր ըլլան: Ի՞նչ ընելու էր Պենելոպէ: Եթէ ըսէր «Չեզ չեմ ուզեր», անոնք կը մեռցնէին զինքը, եթէ անոնցմէ մէկուն հետ ամուսնանար, իր էրկանը առջեւ յանցաւոր կ'ըլլար, որովհետեւ կարելի էր որ էրիկը մեռած չէր, և օր մը չէ օր մը վերադառնար:

Պենելոպէ պատասխանեց իշխաններուն թէ գորգ մը սկսած է գործել, երբ լմնայ, այն ատեն իրենցմէ մ'կը կ'առնէ: Իշխանուհին ցորեկը կը գործէր, իսկ գիշերը գործուածին մէկ մասը կը քակէր, այնպէս որ գորգը ամենեւին չէր լմնար: Մինչեւ որ օր մ'ալ էրիկը յանկարծ եկաւ ու վռնոեց բոլոր իշխանները, և հանգստացուց իր սիրելի կինը:

10. Առած. — Ագնիւ կիև մը բնաւ բարկացոս ջըշար, ակեևուն հետ ակուշորքեանք կը վարուի եւ ակեևեռիև գեշ բակեր չ'ըներ:

11. Առած. — Կիև մը յորս ձիւրք ունեւարու է. առաքիևորքիևն իր արշիև մեք, հաւեւսարքիևն՝ ճակիև վրայ, քաղցրարքիևն՝ շրորևնիև վրայ եւ գրաղորմ՝ ձեռքիև մեք:

Յ. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Քաղցր բնաւորութիւնը գազաններու վրայ ալ ազդեցութիւն կ'ընէ. — Չէ՞ք լսած արդեօք Անտրոքլէս անունով գերիի մը պատմութիւնը: Մտիկ ըրէք: Անտրոքլէս իր տիրոջ տունէն կը փախչի և անապատները կ'երթայ: Չինքը կը փնտռեն չեն գրտներ. եթէ գտնէին, պիտի մեռցնէին: Օր մը անտառին մէջ սոսկալի մոնչիւն մը կը լսէ ու կը տեսնէ որ հսկայ առիւծ մ'իրեն կողմը կուգայ: Անտրոքլէս նախ սաստիկ կը վախնայ, բայց կը տեսնէ որ առիւծը կամաց կամաց կը քալէ և իր վրայ յարձակելու միտք չունի: Գերին

սիրտ կ'առնէ և կը մօտենայ առիւծին: Կը տեսնէ որ հսկայ գաղանթ ցաւալի մոնչիւններ կ'արձակէ և մէկ ոտքը իրեն կ'երկնցնէ: Անտրոքլէս կը տեսնէ որ առիւծին ոտքը վերաւորուած է, խոշոր փուշ մը մտեր է անոր մէջ: Փուշը կը հանէ՝ առիւծին ոտքը կը կապէ, կ'աղէկցնէ: Առիւծը ուրախանալով կը ցատքուտէ կ'երթայ, առանց շնորհակալութիւն յայտնելու իր բարեբարին, բայց անոր վնաս մ'ալ չըներ:

Տարիներ կ'անցնին: Օր մ'ալ Անտրոքլէս կը բըռնուի, զինքը Հոռոմ քաղաքը կը տանին և կ'որոշեն իբրև յանցաւոր անօթի առիւծի մ'առջեւ ձգել զայն: Հաղարաւոր մարդիկ նստած կը դիտեն: Խեղճ Անտրոքլէս՝ ոտքը ձեռքը կապուած՝ հրապարակին մէջտեղն է, և առիւծի մը գառազեղին դուռը բանալով, անօթի գաղանթ կը թողուն: Առիւծը հազիւ գերիին կը հասնի, փոխանակ անմիջապէս զանի կտոր կտոր ընելու, թաթովը կը շոշափէ զայն, և անոր ոտքերուն տակը պառկելով՝ շան մը պէս կը սկսի քծնիլ: Բոլոր հանդիսականները կը զարմանան: Հրաշք: Աս այն առիւծն էր որուն ոտքը աղէկցուցած էր Անտրոքլէս, և հիմա իր բարեբարը կը ճանչնայ: Թագաւորը, երբ այս բանը կը լսէ, հրաման կ'ընէ որ Անտրոքլէս ազատ ըլլայ և առիւծն ալ իրեն ըլլայ: Կը տեսնէք որ մարդը իր անուշ բնաւորութեամբ գաղանթն անգամ սիրելի կ'ըլլայ:

12. Առած. — Աւեւեւ չար մարդիկ, ակուշ բնաւորութեան առջեւ, կ'աղէկնան:

13. Առած. — Կեկրակներու հետ աղէկ վարուելու է, զակուսի խնամելու է:


14. Առած. — Հարկերու քանակը որ ազոխը կ'ըշայ քաղցրահամ ոռուի, քրեկիկի տերեւ ալ սևորու:

Ց. ԽՍՈԱԿՅՈՒԹԻՒՆ. — ‘Բաղրուքիւն’ կենդանիներու
 ցկաւմամբ. — Կատուին համար ամէն մարդ կ’ըսէ թէ
 չար է և կը ճանկէ: Բայց ես կը հաւտայնեմ ձեզ որ, եթէ
 կատուին հետ անուշութեամբ վարուին, ամենեւին մաքէ
 չ’անցընեն մէկը ճանկել: Շատ անգամ տանը կատուն կը
 սիրէ այն պղտիկ աղջիկը որ շարունակ զինքը կը շոյէ,
 կը դրկէ: Բայց կը ճանկէ այն տղան որ իր պոչէն կը
 քաշէ, փայտով իրեն կը դարնէ, կամ զինքը կը չար-
 չարէ: Տղաք պէտք է սիրեն կենդանիները, ըլլայ
 շուն, ըլլայ գառնուկ, ձի, կով, հաւ, սագ: Անոնք որ
 կենդանիներուն հետ աղէկ կը վարուին և անոնց վրայ
 կը գլխան, մարդոյ հետ ալ աղէկ պիտի վարուին:



ԱՄՓՈՓՈՒՄ ՈՒԹԵՐՈՐԴ ԱՄՍՈՒԱՆ

Բարկութիւնը խիստ վտտ բան է: Պէտք է աշխատինք բարկացող
 չըլլալու: Բարկացած մարդը խենդի պէս է և շատ անգամ գէշ բաներ
 կ’ընէ: Ամէն մարդու հետ անուշ, մարդասէր, քաղաքավար ըլլանք, այն
 ատեն ամէն մարդ մեզ պիտի սիրէ: Մոռնալու չենք որ կակուղ բնուոր-
 ութիւնն աւելի աղէկ է խիստ բնաւորութենէն եւ անուշ բնաւորութեան
 տէր մէկը շատ անգամ ամէնէն չար մարդուն կը յաղթէ: Կենդանիները
 մեր մանկութեան բարեկամներն են, անոնց հետ քաղցրութեամբ վարուե-
 լու ենք, եւ զանոնք պաշտպանելու ենք:



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. ԳԱՍ. — ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Նախարարութիւններ. — Պետութեան վերաբեր-
 եալ գործերը կը վարեն Նախարարները, որոնք կ’ընտ-
 րուին Վեհ. Սուլթանին խրատով, (Գ. Պրակ, էջ 9,
 Դաս 2):

Ա. Մեծ-Նպարեալը Նախարարներուն ամէնէն մեծն
 է և Վեհ. Սուլթանին փոխանորդը կը սեպուի: Ան կը
 նախագահէ Նախարարական Խորհուրդին և բոլոր պաշ-
 տօնեաներուն վրայ կը հսկէ, անոնց կուտայ պէտք ե-
 զած ուղղութիւնն ու հրամանները:

Մեծ-Նպարքոսին պաշտօնատունը կ’ըսուի Բարձրա-
 դոյն Դուռ (Պապը Այլի), ուր կը գտնուին նաեւ Այտա-
 քին Գործերու Նախարարութիւնն ու Պետական Խոր-
 հուրդը:

Բ. Կրօնապետը (Շեյխ-խը-Իսլամ) Իսլամ ժողովուր-
 դին զուտ հոգեւոր գործերը կը վարէ, ամուսնական,
 ժառանգական և կրօնական դատերը կը քննէ և վճիռ
 (ֆէքրիւ) կուտայ:

Գաւառներու հափիւններն ու նայիսները Շեյխ-խը-
 Իսլամին կողմէ կ’ընտրուին և տեղական նոյն տեսակ
 գործերը կը տնօրինեն:

Դ. Դասական եւ Կրօնական գործերու (կամ Արդա-
 բուքեան) Նախարարը կը հսկէ դատարաններու վրայ,
 (է. Պրակ, էջ 6—9, Դաս 1—4) և հոգ կը տանի որ ի-
 բաւունքով ու արդարութեամբ վճուելին ժողովուրդին
 մէջ ծագած դատերը: Ան կը հսկէ նաեւ որ ոչ-Իսլամ հա-
 սարակութիւններու ազգ. կրօնական գործերը շնորհ-
 ուած արտօնութիւններու և հաստատուած կանոններու
 համեմատ տնօրինուին Պատրիարքարաններու միջոցաւ:

2. ԴԱՍ. — ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ (Շար.)

Գ. Պատերազմական Նախարարը կը հսկէ բանակին ընդհանուր կազմակերպութեան, հոգ կը տանի որ Օսմ. զինուորները կանոնաւոր ըլլան, զարգանան, լաւ մարզուին, և երկրին պաշտպանութեան ծառայեն: Պատերազմական Նախարարին հսկողութեան տակ են Զօրաբանակները որոնք եօթը կեդրոններ ունին:

Ե. Ծովային Նախարարը կը վարէ Պետութեան նաւային ուժերը և ծովու կողմէ կը պաշտպանէ երկիրը: Ծովային Նախարարին տրամադրութեան տակ են Օսմ. զրահապատ նաւերն ու թնդանօթները: Անոնք կը հրակեն նեղուցներու և ծովեզերքի բ'րդերու պաշտպանութեան: Ծովային բանակն ալ ունի մասնաւոր կազմակերպութիւն, զինուորներ, սպաներ, զօրախումբ, ծովակալ, ևւայն:

Զ. Պետական Խորհուրդը կը հսկէ Պետութեան օրէնքներուն անթերի գործադրութեան: Ան կը կատարէ օրէնքներու քննութիւնն և ի հարկին կը բարեփոխէ ու կը սրբագրէ: Պետական Խորհուրդն ունի այլեւայլ ճիւղեր, ատեաններ, զխմաններ և դատարաններ:

Է. Ներքին գործերու Նախարարը կը վարէ Պետութեան Քաղաքային գործերը, Վարչական բաժանումներու բոլոր պաշտանեաններուն Պետն է, և կը հսկէ Ոստիկանական վարչութեան, Տպագրական տեսչութեան և երկրին բարեկարգութեան:

3. ԴԱՍ. — ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ (Շար.)

Ը. Կսակներու Նախարարութեան պաշտօնն է Պետութեան մէջ գտնուող կրօնական և բարեպաշտական

հաստատութիւններուն հսկել, և հոգ տանիլ որ անոնց վերաբերեալ կտակները (վազըֆ[*]) ճշտիւ գործադրուին:

Թ. Արսաֆին գործերու Նախարարը օտար Պետութեանց առջեւ Օսմ. Պետութեան ներկայացուցիչն է: Օտար զեապանները անոր կը դիմեն միջազգային գործերու համար: Ինչպէս որ Թուրքիոյ մէջ օտար Պետութիւններն ունին ներկայացուցիչներ, նոյնպէս ալ Օսմ. Պետութիւնը ունի օտար երկիրներու մէջ Բեսպաններ, Հիւպատոսներ, Գեր-հիւպատոսներ, Գործակատարներ:

Ժ. Երկրական Նախարարին պարտականութիւնն է Պետութեան հասոյթները գանձել և ծախքերը հոգալ:

ԺԱ. Կերական Նախարարը Օսմ. Պետութեան բոլոր դպրոցներուն վերին հսկողն է, ինչպէս պիտի տեսնենք իր կարգին: Ան է որ կուտայ կրթական ուղղութիւնը, կ'ընտրէ դպրոցներու վարիչներն ու դասատուները, և կ'որոշէ դասերն ու դասագրքերը:

ԺԲ. Առեւտրական եւ Հանրօգուտ շինութեանց Նախարարը կը հսկէ երկրին առտուորին, զարգացման, ճամբաներու, խճուղիներու, երկաթուղիներու, կամուրջներու, ջրանցներու և ուրիշ շինութիւններու պահպանման, ևւայն:

ԺԳ. Անտառներու, Հանքերու եւ Երկրագործութեան Նախարարութիւնը կը վարէ նոյն ճիւղերու վերաբերող գործերը, որոնք երկրին հարստութեան աղբիւրներն են:

1. — Որո՞նք են գլխաւոր Նախարարութիւններն եւ ի՞նչ է անոնց պաշտօնը (Ա. - ԺԳ.):

(*) Ժողովուրդը երբ կրօնական ու բարեգործական հաստատութեան մը նուէր կ'ընէ, այս նուէրը կը կոչուի վազըֆ:

4. ԳԱՍ. — ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԻՒՆՆԵՐ

2. Վերասեսչութիւններ. — Ասոնք ալ ունին իրենց յատուկ ճիւղերն ու պաշտօնը: Գլխաւորներն են.

1. Թղթասարական եւ Հեռագրական ճիւղը որ երկրին այլեւայլ կողմերն ու օտար երկիրները զրկուելիք նամակ, դրամ, եւն. կը ստանայ, և ծովու, երկաթուղիի ճամբով կամ ձիաւոր սուրհանդակներու միջոցաւ կը զրկէ արագ ու ածան կերպով:

2. Մաքսային վարչութիւնը ամէն քաղաքի և նաւահանգիստի մէջ ճիւղեր ունի: Օտար երկիրներէ եկած կամ ուրիշ տեղեր զրկուելիք ո՛րեւէ վաճառքէ սուրք կ'առնէ (Մաքսաւոր):

3. Երկրին եօթը տեսակ բերքերու սուրքը թողուած է Հանրային Պարտուց Վարչութիւն կողմէ պաշտօնատան:

4. Մարդահամարի վարչութեան պաշտօնն է ամէն Օսմ. հպատակի անունը, ճնելուն թուականը և ուրիշ ասոր նման ծանօթութիւնները յատուկ տոմարի մը մէջ արձանագրել և տալ Օսմանիյի քեզիեկայն: Ասով կ'որոշուի թէ մէկը Օսմանեան հպատակ է թէ ուրիշ Պետութեան հպատակ է:

5. Կալուածներու Վերասեսչութիւն. — Օսմանեան երկիրներու մէջ ամէն մարդ ազատ է՝ հողեր, արտեր, կալուածներ, խանութ, տուն, պանդոկ, եւն. գնելու կամ ծախելու: Արդ՝ ամէն գիւղի ու քաղաքի տուներն ու հողերը որոշ սահման ու յատակագիծ ունին, անկէ կը հասկցուի թէ այսինչ արար կամ տունը ո՞րչափ տարածութիւն ունի: Այս ամէնը գրուած է Կալուածներու Վերասեսչութեան տետրակներուն մէջ, և որոշուած է ամէն մարդու հողին կամ կալուածին չափը, գինը, եւն. Երբ մէկը իր տունը ծախել ուզէ, գնողին հետ կ'երթայ

Կալուածներու Վերասեսչութեան և անոր տոմարներուն մէջ (Տեքիեր խազանի) այս առուծախը գրել կուտայ՝ սուրք մը վճարելով:

6. Տպագրական Տեսչութիւնը կը հսկէ երկրին մէջ տպուող գիրքերուն ու լրագիրներուն, որպէս զի բարոյականի ու կրօնքի հակառակ բաներ չպարունակեն:

7. Ոստիկանական Նախարարութիւնը երկրին ու ժողովուրդին հանդատութեան հոգ կը տանի. կոխ, սպանութիւն, գողութիւն, եւն. բնոյները սասիկաններու (քոյիս) և սասիկանդինոյներու (ժակսարմա) կողմէ կը ձերբակալուին ու կը բանտարկուին:

8. Փողերանցի Վերասեսչութեան պաշտօնն է Օսմ. երկիրներու մէջ գործածուող դրամները կոխել: Այդ դրամները կ'ըլլան ոսկի և արծաթ, մէկ կողմը ունենալով քուրա(*) և մ'ւս կողմը տպուելուն թուականն ու սա գրութիւնը. Ազգե Լաարուհու տուրիպէ ֆիյ Գօսրանքընիյի, որ բնի է Սուրբ ըլլայ Ասուծոյ օգնութիւնը, կոխուեցաւ Կ. Պոլսի մէջ:

9. Բաղաւապետութեան (Շեկեր-եմակքի) պաշտօնն է հսկել ժողովուրդին առողջութեան, առներու, փոքոյններու մաքրութեան ու կանոնաւորութեան. գանձել շահու վրայ սուրքը (քեմեքքի վեկիսի) ինչպէս և կալուածական սուրքը (եմլաք վեկիսի): Հոգ կը տանի որ ամէն արհեստաւոր (եմլաք) իր արհեստը հաւատարմաբար և օրէնքի համաձայն բանի, կշիռներն ու չափերը չխարդախուին և ժողովուրդը չխաբուի: Կը հսկէ նաեւ վաճառուած ուտելիքներու վրայ, որպէս զի փտած, նեխած, առողջութեան վնասալար չըլլան, եւայլն: Աս գործերուն համար ամէն թաղ ու քաղաք ունին Թաղապետական Խորհուրդներ, բժիշկներ և Պեշեխիյի չավոշներ, որոնց կուրծքին վրայ կայ ուսընդամուտ լայն երիզ մը՝ ձերմակ կաշիէ:

2. Որո՞նք են Վերասեսչութիւններն եւ ի՞նչ է անոնց պատօնը:

(*) Թուրան Օսմ. Կոյսրուքեան կնիքն է՝ ձեռի ձեռով:

ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՍՄՈՒԹԻՒՆ




1. ԳԱՍ. — ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (Է.—ԺԲ. ԴԱՐ)

1. Վրացիները Հայերէն կը բաժնուին. — Մովսէս Բ. էն ետքը, Շամբատ Բագրատունիի գահերէցութեան օրով յաջորդեց Աբրահամ, որու ատեն Վրաց Կաթողիկոսն էր Կիւրիոն, Մովսէսի ձեռնաստուն աշակերտն ու Կաթողիկոսարանի երեւելի անձերէն մէկը: Վրացիները մինչեւ ասոր ատեն Հայ եկեղեցիին հետ կապուած էին: Կիւրիոն բաժնուեցաւ ու Յոյներուն յարեցաւ: Աբրահամ զանազան թղթերով ուղեց զինքը համոզել, բայց երբ չկրցաւ, Դուինի մէջ ժողով գումարեց 596ին ու Վրացիներն իրեւ մոլորեալ նշովեց, և անոնց հետ ամէն հաղորդակցութիւն արգելեց:

2. Հերակ կայսր ու Եզր Կարաւղիկոս. — Երբոր այսպէս, Հայերը թէ՛ Յոյներէն և թէ՛ Վրացիներէն բաժնուեցան, Յոյն կայսրերը թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքական շահերէ գրգռուած, Հայերը Յունաց հետ միացնելու ետեւէ կ'ըլլային: Հերակ կայսրը 629ին, Պարսից դէմ ըրած յաղթական արշաւանքէն Կարին դառնալով՝ Հայերը Յունաց հետ միաբանեցնելու փորձ մ'ըրաւ: Ասոր համար իր երեւելիներէն Միսե Գնունի Դուին զրկեց որ Եզր Կաթողիկոսը Կարին Դաւառական ժողովի հրաւիրէ: Եզր աս հրաւերն ընդունելով՝ իր երեւելի անձերն առած՝ Կարին եկաւ 629ին: Եզր չգիտնանալով ընդունեց Յունաց հետ միաբանութիւնը: Կայսրն իր ուրախութիւնն ու գոհութիւնը ցուցուց՝ Կողբի կողմերուն մէկ կալուածն ու ազահանքը Կաթողիկոսին պարգեւ տալով: Կաթողիկոսին գլխաւոր ընդդիմադիրներէն էր Յովհաննէս Մայրապետեցին:

1. — Ի՞նչպէս եւ ե՞րբ բաժնուեցան Վրացիներն Հայերէն: —
2. Ի՞նչ պատճենեալ այդ բաժանումէն վերջ, Հայերուն ու Յոյներուն մէջ: Ի՞նչ ըրաւ Հերակ կայսրը: Եզր Կարաւղիկոսի օրով ի՞նչ պատճենեալ:



2. ԳԱՍ. — ՄԻՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

3. Ներսէս Գ. Շինող. — Քանի մը տարի ետք (648ին), Յունաց Կոստանդ Բ. կայսրը հայազգի Դաւիթ Փիլիսոփան (*) Դաւանական թղթով մը Կ. Պոլսէն Դուին քաղաքը զրկեց: Հոն բազմաթիւ եպիսկոպոսներ՝ Ներսէս Գ. Շինող Կաթողիկոսին գահերէցութեամբ ժողվուած՝ Յունաց կայսեր առաջարկը մերժեցին և իրենց Սինոդական վճիռը նամակով մը կայսրին ծանուցին: Քանի մը տարի ետք, 654ին մօտերը, Կոստանդ կայսրն անձամբ եկաւ, նոյն քաղաքին Կաթողիկոսարանը նստաւ, և Յոյն լեզուով ու արարողութեամբ բռնի Պատարագ ընել տալով՝ Կաթողիկոսին և իր եպիսկոպոսներուն հետ հաշտուեցաւ:

4. Յովհաննէս Մանազկիւսցին. — Ներսէս Գ. Շինող ստիպուեցաւ Տայոց երկիրը քաշուիլ՝ Թէոդորոս Ռշտունիէն վախնալով: Ռշտունի Թէոդորոսէն Կաթողիկոս դրուեցաւ Յովհաննէս Մանազկերտցին որ գրով ու գործով Յունաց պահանջումներուն դէմ կռուեցաւ: Մանազկերտի մէջ ալ ժողով գումարեց, Եզրի ընդունածները մերժեց և հրամայեց որ Ս. Ծնունդը Յայտնութեան հետ մէկտեղ տօնուի:

(*) Պէտք չէ շփոթել այս Դաւիթ իմաստասէրը (որ ապրած է Է. Դարուն եւ կը կոչուի Բագրեւանդացի) Դաւիթ Անյաղրիմ հետ, որ նոյնպէս փիլիսոփայ կոչուած է, եւ ապրած է Ե. Դարուն, (Տե՛ս 2. Պըրակի, էջ 14, Դաս 4, Երկրորդ քարգնանիջներ):

3. — Դաւիթ Բագրեւանդացի Փլիխոսիան ինչո՞ւ Դուին գնաց : Ո՞վ զրկեց զինքը : Ի՞նչ եղաւ արդիւնքը Դուինի ժողովին : 654 թուականին ի՞նչ ըրաւ Կոտսանդ կայսրը : — 4. Ի՞նչ ըրաւ Յովհաննէս Մանազկերտցի Կարուղիկոսը :

3. ԴԱՍ. — ԿՐՈՆԱԿԱՆ ՎԷՃԵՐ

5. Պառլիկեաններ կամ Թոնդրակեցիներ, Յովհաննէս իմաստաւէր. — Մանիքեցիներուն հետեւող ազանդաւորներ Պառլիկեան կամ Թոնդրակեցի կ'ըսուին, որոնք ընդհանրապէս ամէն եկեղեցական խորհուրդները մերժելէ դատ, միանգամայն պատկերամարտ էին : Ասոնց դէմ զօրաւոր ձառ մը խմբագրեց Օձնեցի Յովհաննէս Իմաստաւէր Կաթուղիկոսն (718—729), որ եղիպյն յաջորդած էր : Յովհաննէս Կաթուղիկոս՝ իր բարձր մտաւոր կրթութեան ու նախորդներէն աւելի ունեցած աստուածաբանական ու փիլիսոփայական հմտութեանց համար՝ իմաստաւէր կոչուեցաւ :

Կաթուղիկոսական աթոռն ելած ատեն, Հայ եկեղեցիցին բաւական թշնամի ունէր. Եւաթքէսեան ազանդը Հայոց մէջ ճարակել կը սպառնար, Յունաց հետ ալ արարողութեանց ու հաւատքի վերաբերեալ խնդիրներ դեռ կը շարունակուէին : Իմաստաւէրն՝ այս պզտոր ու մրրկալից ժամանակ՝ մեծ իմաստութեամբ կառավարեց եկեղեցին : Յունաց Գերմանոս Պատրիարքը դաւանական ընդարձակ թուղթ մը գրեց զոր Ստեփանոս Սիւնեցին՝ դեռ քահանայ՝ հետը բերաւ : Այս թղթին ընդգլխադրական պատասխանը նոյն իսկ Ստեփանոս գրեց :

6. Փոս Պատրիարք ու Զաւարիա Կարուղիկոս. — Բանի մը Կաթուղիկոսներէ ետք, Կաթուղիկոս ընտրուեցաւ Զաքարիա 854—876 : Այն ատեն Կ. Պոլսոյ Պատրիարքն էր Փոս որուն Զաքարիա թուղթ մը գրեց : Փոս

այս թուղթը յանձնեց Նիկիոյ Յովհաննէս կամ Վահան հայազգի Արքեպիսկոպոսին որ Փոսին կողմէ թէ՛ Զաքարիա Կաթուղիկոսին և թէ՛ Բագրատունի Աշոտին թղթեր գրեց : Այս թղթերէն վերջ, Յովհաննէս Արքեպիսկոպոս անձամբ Հայոց քով եկաւ : Զաքարիա Կաթուղիկոսը 862ին Շիրակվանի ժողովը գումարեց ուր ներկայ էին Աշոտ և ուրիշ երեւելի անձեր : Շիրակաւանի ժողովին որոշումներն երկարատեւ ազդեցութիւն մը չունեցան :

5. — Թոնդրակեցիներն ի՞նչ կարծիքներ ունէին Եկեղեցական խորհուրդներու եւ պատկերներու մասին : — Աս մտաւորեանց դէմ ո՞վ մատուցաւ : — Որո՞ւ յաջորդած էր Օձնեցին : — Ինչո՞ւ իմաստաւէր կոչուեցաւ : — Ուրիշ ինչե՞ր պատահեցան Օձնեցի Օհան Կաթուղիկոսի օրով : Գերմանոս Յոյն Պատրիարքին դաւանական բոթին ո՞վ պատասխանեց : — 6. Ո՞ր ժողովը գումարուեցաւ Զաւարիա Կարուղիկոսին օրով եւ ինչո՞ւ :

4. ԴԱՍ. — ՀԱՅԵՐԸ Ժ. ԴԱՐՈՒՆ

3. Մաշոց ու Յովհաննէս Զ. պատմագիր. — Զաքարիայի մահուանէ քսան տարի ետք, Կաթուղիկոս ընտրուեցաւ Մաշոց Եղիվարդեցի որ Յոյներուն հետ միաբանութիւն առաջարկողներուն դէմ պայքարեցաւ :

Աչակերտը՝ Դրասանակերտցի Յովհաննէս Զ. Պատմագիրը՝ իրեն կը յաջորդէ : Յովհաննէս Կաթուղիկոս ունի պատմութիւն մը՝ ժամանակակից ազգ. եկեղեցական դէպքերու վրայ՝ նախանձայոյզ ոգիով գրի առնուած : Յովհաննէս Զ. Պատմագիր մեր նշանաւոր հայրապետներէն մէկն է :

8. Աճիի ժողովները. — Յովհաննէսէն կէս դար ետք, Կաթուղիկոս կ'ընտրուի Վահան (965—980), որ Նոր Դարոց, Բ. Պրակ



Կաթուղիկոսական գահը բարձրացաւ թէ չէ, ուղեց Յու-
նաց հետ միաբանիլ ու Քաղկեդոնի ժողովն ընդունիլ :
Բայց 970ին Անիի մէջ եկեղեցականներու ու վանական-
ներու ժողով մը գումարուեցաւ . հոն մերժուեցան Վա-
հան Կաթուղիկոսն և իր խորհուրդները, ու Սեւանի
Վանահայրը, Ստեփաննոս, Կաթուղիկոս ընտրուեցաւ :

9. Խոսրով Անձեւացի . — Իրիգոր Նարեկացիին
հայրն ու Անձեւացեաց Եպիսկոպոսն էր Խոսրով Անձեւացի
որ՝ մանկութենէն հետամուտ ըլլալով ուսման՝ Ժ. Դա-
րու եկեղեցական հայրերու մէջ մեծ տեղ մը գրաւեց :

Սա՛ Անանիա Նարեկացիին եղբոր աղջկան հետ ա-
մուսնացած ըլլալով՝ երեք որդի ունեցած էր . Յովհան-
նէս, Սահակ, Իրիգոր : Բայց յետոյ աշխարհային կեան-
քէ հրաժարելով՝ վանք մը առանձնացաւ ու, քանի մը
տարի ետք, Անձեւացեաց Եպիսկոպոս ընտրուեցաւ :
Խոսրով գրած է Պատարագի ու Ժառանգրի Մեկնութիւններ :

7. Ո՛ր յաջորդեց Զաբարիային : Մահոց եղիվարդացիին ի՞նչ
բանի դէմ մահաւո՞ւեցաւ : Ի՞նչ գիտէք Յովհան Կարուղիկոսի վրայ : —
8. Անիի ժողովը ո՞ր Կարուղիկոսին օրով գումարուեցաւ . եւ ինչո՞ւ :
Ի՞նչ վճիռ տուեցաւ նոյն ժողովին մէջ : Ո՞ր յաջորդեց Վահանին :
— 9. Ո՞ր է Խոսրով Անձեւացի : Ի՞նչ գիտէք անոր կեանքին վրայ :

5. ԳԱՍ. — ՆՈՒԻՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ

10. Նուիրական մատեաններ . — Այն գրքերը որոնք
միայն եկեղեցիներու մէջ կը կարդացուին, կը կոչուին
Նուիրական մատեաններ : Ասոնք են՝

ձառոց-գիրք որ կը պարունակէ Հին ու Նոր Կտա-
կարաններէ ընթերցումներ, ձառեր, անօրինական սո-
ներու քարոզներ, աղօթքներ ու տաղեր :

Մահոց . — Հայց. Ս. Եկեղեցիին ծիսարանն է . կը

պարունակէ ձեռնադրութիւնն իր աստիճաններով, թաղ-
ման կարգ, մկրտութեան եւն . խորհուրդները, եկեղե-
ցիի հիմնարկէքը, եւն . : Ս. Մեսրոպի անունով, որ Մաշ-
տոց ալ կը կոչուէր, այս գիրքը Մաշտոց ըսուած է, ո-
րովհետեւ ինք՝ Ս. Մեսրոպ՝ գլխաւոր կարգաւորիչն ե-
ղած է եկեղեցական արարողութեանց :

Տօնացոյց . — Տէրունական և Սուրբերու տօներուն ,
լուր ու պահք օրերուն մէջ կատարուելիք ընթերցում-
ներու, գիրքերու և երգուելիք շարականներու ուղե-
ցոյցն է : Երկու մասի բաժնուած է :

Ժամագիրք . — Հայց. Ս. եկեղեցիին ժամնորդութեանց
հաւաքածոն է, առանձին մասերու բաժնուած :

Սաղմոս . — Դաւիթ մարգարէին քնարական բա-
նաստեղծութիւններն ու աղօթքները՝ ութ ձայնի վրայ
դասաւորուած :

Խորհրդատե՛ր . — Կը պարունակէ Ս. Պատարագի
խորհուրդն և անոր յարակից աղօթքները :

Տաղարան . — Պատարագի արարողութիւնը, տաղեր
ու գանձեր կը պարունակէ :

6. ԳԱՍ. — ՆՈՒԻՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ (Շար.)

Շարական . — Մեր երանաշնորհ նախնիքներու բա-
նաստեղծական երգերու հաւաքածոն է, նուիրուած
աստուածային փառքին, Յիսուսի մարդեղութեան ու
սուրբերու նահատակութեան գովեստին :

Մանօք . — Շարականներու առաջին հեղինակներն
աւանդութեամբ կը համարուէին Ս. Սահակ ու Ս. Մես-
րոպ, Մովսէս Խորենացի ու Յովհաննէս Մանդակունի :
Շարականները նմանութիւն են Սաղմոսներուն ու յար-
մարցուած՝ մեր Ազգ. եկեղեցական կեանքին : Շարա-

կաններն առաջին անգամ կարգի գրուեցան է. Դարուն Բարսեղ ձոնի օրով: Շարական գրած են նաև Կոմիտաս Կաթուղիկոս, Սահակ Զորափորեցի Կաթուղիկոս, Պետրոս Գեառգարձ, Ներսէս Շնորհալի, Յովհաննէս Կաթուղիկոս, ևւայն:

Յայսմաւուրբ. — Տէրունական տօներու վրայ ճառեր և սուրբերու վարքին ու նահատակութեանց պատմութիւնն է զոր մեծ մասամբ հաւաքած ու շարադրած է Գրիգոր Վկայասէր Կաթուղիկոսը:

Նարեկ. — Երանաշունչ աղօթքներ զոր գրած է Հայ եկեղեցիին մեծ վարդապետներէն Գրիգոր Նարեկացին:

11. Գրիգոր Նարեկացի. — Խոսքով Անձեւացեաց Եպիսկոպոսին որդին էր Գրիգոր, որ ծնաւ 951ին ու կրթուեցաւ Անանիա Նարեկացիին քով: Շատ կանուխ փայլեցաւ սրբութեամբ, հանձարով ու գիտութեամբ, և քիչ առեւէն իր ժամանակին անուանի եկեղեցականներէն մէկն եղաւ: Նարեկացին նախանձորդներ ունեցաւ որ մինչեւ Անի գացին՝ Կաթուղիկոսին առջեւ ամբաստանութիւններ ընելու իրեն նկատմամբ: Բայց սուրբն անխուով շարունակեց իր քաշուած կեանքը՝ բազմաթիւ երկասիրութիւններ գրելով, որոնց մէջ նշանաւոր է Աղօթք կամ Նարեկ կոչուած հոգեշունչ գործը:

Ունի նաև Ճատեր, Գաւձեր, Տաղեր ու Մեղեդիներ:

Նարեկացին 60 տարեկան հասակին մէջ կնքեց իր սրբատուն ու աշխատասէր կեանքը, և թաղուեցաւ Նարեկայ վանքին մէջ:

10. — Ի՞նչ բնէ է Նուիրական մատան եւ որո՞նք են Հայ եկեղեցիին մէջ կարգացուած այդ գրեքը: Ի՞նչ մաթթօրիւններ ունիք Շարականներու վրայ: — 11. Գրիգոր Նարեկացիին որո՞ւ գաւակ է: Ե՞րբ ծնաւ: Որո՞նք են գրական գործերը ճազգային այս մեծ կրօնական բանաստեղծին:

7. ԴԱՍ — ՀԱՅԵՐԸ ԺԱ.—ԺԲ. ԴԱՐՈՒՆ

12. Հայ եւ Յոյն եկեղեցիներու մէջ խնդիրներ. — Ժ. Դարուն վերջերը Հայերն այլեւայլ ազգերու մէջ չձուլուելու համար, պէտք ունեցան Յոյներուն աջակցութեան: Բայց դժբախտաբար նոյն ատեններ յունական եկեղեցին զանազան հերձուածներով տկարացած էր: Հայ և Յոյն եկեղեցիներու մէջ ալ պաղութիւն ու անխտանութիւն մտած էր, գլխաւորաբար Յոյներու կողմէ եղած ճնշումներու և իրաւունքի բռնաբարութեան պատճառաւ: Այս միջոցին Յոյները մեծ ճիգ կ'ընէին Հայ ազգը կրօնապէս ու աշխարհականապէս իրենց հետ ձուլելու: Պէտրոս Գեառգարձ Հայոց Կաթուղիկոսը տկար գանուեցաւ Ազգ.եկեղեցական շահերը պաշտպանելու, թէեւ ինք գիտնական Վարդապետ մըն էր ու յօրինած՝ ուժ ձայնի վրայ՝ Մասիսրոսաց ու Հակոստեան նաև Մակրակն գեղեցիկ Շարականները:

Այս ատեններս կ'ապրէր Արիստակես Լասիսիլերցի Վարդապետը որ իր ժամանակին ընդարձակ պատմութիւնը գրած է:

13. Գրիգոր Բ. Վկայասէր. — Յոյները Պետրոս Գեառգարձին յաջորդ Խաչիկ Բ. Կաթուղիկոսը Կ. Պոլիս արգելելէն զատ, անոր մահուընէ ետքը, նոր Կաթուղիկոսի մը ընտրութիւնն ամէն կերպով խափանել կը ջանային: Հազիւ Գազիկի աղաչելովը, Հայերը կրցան գիտնական Գրիգոր Մազիստրոսի որդին Գրիգոր Բ. Վկայասէրը Կաթուղիկոսական աթոռը հանել (1065—1105): Ասիկա Հայ ու Յոյն եկեղեցիներու միջեւ տեղի ունեցած անհամաձայնութիւնը վերցնելու համար անձամբ Կ. Պոլիս Այեքս Կոմենեսոս կայսրին գնաց. բայց, առանց բան մ'ընել կարենալու, ետ դարձաւ: Այս Կաթու-

դիկոսին օրով Հռոմի Պապին հետ յարաբերութիւն մը սկսաւ :

14. Աղբամարի Կաթողիկոսութեան սկիզբը. — Վրկայասէրին յաջորդեց Բարսեղ Ա. Անեցի որ անոր կենդանութեան ատեն իբր Կաթողիկոսի փոխանորդ Անի կը նստէր: Բայց, հազիւ ութը տարի զատ Կաթողիկոսութիւն ընելէ ետք, մեռնելով Կաթողիկոսական աթոռը ժառանգեց Գրիգոր Գ. Պահլաւունի: Վասպուրականի Եպիսկոպոսները Գրիգոր Գ. Կաթողիկոսին հակաթոռ ընտրեցին, 1114ին, Դաւիթ Թոռնիկեան Աղթամարի Արքեպիսկոպոսը: Եւ երբոր Ազգ. ժողովքի մը մէջ Գրիգոր օրինաւոր Կաթողիկոս ճանչցուեցաւ, Դաւիթ Աղթամար կղզիին վրայ ինքնագլուխ Կաթողիկոսութիւն մը հաստատեց որ մինչեւ այսօր կը շարունակուի: Այս Աղթամարի Կաթողիկոսները Կ. Պոլսոյ Պատրիարքութեան նման էջմիածնի Մայր-Աթոռին հովանիին տակ են:

15. Ընդհանրական Կաթողիկոսներու արտը այլեւայլ ժամանակներ տեղէ տեղ փոխադրուած է Ս. Լուսաւորչի Աջին հետ: Այսպէս, Գրիտաստի 35 թուականին մինչեւ 300, Մայր Աթոռը Արտազի մէջ էր: 301—478՝ Վաղարշապատի մէջ: 478—931՝ Դուինի մէջ: 931—967՝ Աղթամարի մէջ: 968—992՝ Արզնիում: 992—1105՝ Անի: 1105—1166 Սեւ լեռ (Կիլիկիա): 1166—1293՝ Հռոմկըլայ: 1293—1440 Սիւս (*), 1441էն մինչեւ այսօր նորէն Վաղարշապատ:

12. — Ժ. Դարուն վերջեր ի՞նչ զիբ ունէր Հայ եկեղեցին: — Ի՞նչ բանի կը ջանային Յոյները: — Ո՞վ էր այն ասեմ Հայոց Կաթու-

(*) Ընդհանրական Աթոռը Սիսէն Վաղարշապատ (էջմիածին) փոխադրուելէն վերջը. 1447ին, Կիլիկիայիները Սիսի մէջ շարունակեցին ունենալ մասնա որ Կաթուղիկոսութիւն մը:

ղիկոսը: Նայն քուսականին ո՞ր նշանաւոր Վարդապետ կ'ապրէր: — **13.** Յոյները ի՞նչ բրին խաչիկ Բ. Կաթողիկոսը: Ո՞վ Կաթողիկոս ընտրուեցաւ 1065ին: Ինչո՞ր Պալիս գնաց Գրիգոր Բ. Վկայասէր կոչուած Կաթողիկոսը: Ո՞վ էր այն ասեմ Յոյներուն կայսրը: — **14.** Ո՞վ յաջորդեց Վկայասէրին: Բարսեղ Կաթողիկոսին յաջորդը ո՞վ է: Գրիգոր Գ. Պահլաւունի Կաթողիկոսին օրով Վասպուրականի Եպիսկոպոսները ի՞նչ բրին: Ի՞նչ բսել է հակարտ: Դաւիթ Թոռնիկեանը ո՞ր տեղի Կաթողիկոս եղաւ: Հիմա ալ կա՞ր Աղբամարի Կաթողիկոսութիւն Եւ ի՞նչ զիբ ունի: — **15.** Ո՞ր բաղաճներ նրսած են ընդհանրական Կաթողիկոսները՝ սկիզբէն մինչեւ մեր օրերը:

Յ. ԳԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Ը. ԱՄՍՈՒԱՆ (Է.—ՃԲ. ԳԱՐ)

Վրացիներու բաժանումը. — Վրացիները մինչեւ իրենց Կերիոն Կաթողիկոսը Հայ եկեղեցիին իշխանութեան տակ էին: Անոր օրով բաժնուեցան եւ Յոյն եկեղեցիին յարեցան:

Հեռակալ կայսր շատ ջանքեր ըրաւ Հայերն ալ Յոյն եկեղեցիին հետ ձուլելու: 629 թուականին Պարսիկներու դէմ յաղթութեան տանելով՝ վերադարձին՝ այդ միութեան համար Կարինի մէջ ժողով գումարեց Եզր Կաթողիկոս անդիտուծարամ հաւանեցաւ միութեան գործարարին:

Ներսէս Շինող Կաթողիկոսին օրով Յոյներու Կոստանդ կայսրը այս միութեան գործն յաջողցնելու համար Հայագոյի Դաւիթ Բագրեւանդացին Դաւանական թղթով մը դրկեց Դուին, ուր Ներսէս Շինող Կաթողիկոսին նախագահութեամբ ժողով գումարուեցաւ, եւ Կոստանդ կայսրին առաջարկը մերժուեցաւ: Կոստանդ անձամբ ալ եկաւ Դուին, եւ Յոյն լեզուով բռնի Պատարագ ընել տուաւ եւ հաշտուեցաւ Ներսէսին հետ:

Յովնանէս Մանգլիկեցցիին Թեոդորոս Ռաշունիէն Կաթողիկոս ձեռնադրուելով՝ Մանգլիկեցի մէջ ժողով գումարեց եւ մերժեց Եզր Կաթողիկոսի ընդունած միութիւնը, բանի որ այս էր Ազգին փափաքը:

Պաղիկեաններն ու Թոնդրակեցիները ազանդաւորներ էին որ եկեղեցիին այս կամ այն ձեւերն ու խորհուրդները չէին ընդունիր: Ասոնց դէմ Յովնանէս Կաթողիկոսը զօրաւոր ճառ մը գրեց: Նոյնպէս մարտուեցաւ Եւստրիպեան ազանդաւորներուն եւ Յոյններուն դէմ, եւ ասոնց դրկած դաւանական թղթին ալ ազդու պատասխան տուաւ:

Մեր Զաւարիա Կաթողիկոսին օրով ալ Յոյն Պատրիարքը Փոտ թուող դրկեց Զարարիային ու Ալտոս Բագրատունիին: Այն ատեն ալ Շի

րակաւանի մէջ ժողով գումարուեցաւ միութեան գէմ մարտաւելու համար, Մասեոց եղիվարդեցիին յաջորդեց Յովհաննէս Զ. Պատմագիր Կաթուղիկոսը որ նշանաւոր եղաւ:

Անիի ժողովները. — Անոնց յաջորդներէն Վահան Կաթուղիկոս ուզեց Քապկղոնի ժողովն ընդունիլ եւ Յոյներուն հետ միարանիլ: Բայց Անիի մէջ գումարուած Ընդհանուր ժողովը մերժեց եւ պաշտօնական ըրաւ Վահանը՝ անոր տեղ ընտրելով Ստեփանոս Կաթուղիկոսը:

Խոսրով Անձեւացի, որ Գրիգոր Նարեկացիին հայրն է, իր կիներն զատուեցաւ, վանք մտաւ եւ ապա եպիսկոպոս ու Կաթուղիկոս եղաւ:

Եկեղեցական զբերն են ճաշու գիրք, Մաշտոց, Տօնացոյց, Ժամագիրք, Սաղմոս, Խորհրդատետր, Շարական, Յայսմաւուրք եւ Նարեկ գոր բանահիւսած է Գրիգոր Նարեկացիին:

Կրօնական վէճերը Հայ ու Յոյն եկեղեցիներուն մէջ շարունակուեցան ԺԱ. եւ ԺԲ. Դարերուն: Նոյն ատեններ Յոյն եկեղեցին տկարացած՝ չէր կրնար աջակցիլ Հայերուն: Երկու եկեղեցիներուն մէջ ցրտութիւն կը տիրէր, զիստարարար Յոյներուն կրօնական բռնութեանց եւ նենգաւոր հնարքներուն պատճառով: Պէտրոս Քեսաղարձ Կաթուղիկոսը տկար զըտուեցաւ պաշտպանելու ազգ.-եկեղեցական շահերը: Աս Կաթուղիկոսը յօրինած է գեղեցիկ շարականներ: Իր օրով կ'ապրէր նշաւոր Վարդապետ մ'ալ, Արիստակէս Լասիվերցիս:

Յոյները Պետրոս Գետազարձին յաջորդ Խաչիկ Բ. Կաթուղիկոսը Պոլսի մէջ պահեցին եւ անոր մահէն ետքն ալ թող չէին տար որ Հայերը Կաթուղիկոս ունենան:

Գրիգոր Բ. Վկայաւերը վերջապէս Կաթուղիկոս եղաւ՝ Գաղիկ Բ. Բագրատունիին շանքով (1065—1105), Վկայաւերը Պոլիս գնաց՝ Ալէքս Կոմնենոս կայսրը համոզելու եւ եկեղեցական վէճերը զարկեցնելու, բայց անյաջող ետ դարձաւ:

Աղքատարի մէջ ալ Կաթուղիկոսութիւն մը հաստատուեցաւ 1114ին: Սեւ լեռին մէջ (Կիլիկիա), Վկայաւերին յաջորդած էր՝ իրեւ ընդհանրական Կաթուղիկոս՝ Բարսեղ Ա. Անեցի, եւ ասոր ալ յաջորդած էր Գրիգոր Պանչառուհիկն, Ահա ասոր օրով է որ Վասպուրականի Եպիսկոպոսները Աղձամարի Եպիսկոպոս Դաւիթ Թոռնիկեանը հակաժողով Կաթուղիկոս ընտրեցին Աղձամարի, եւ անկէ ի վեր Աղձամարի Կաթուղիկոսութիւնը կը շարունակուի Մայր Աթոռի իշխանութեան տակ:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1. ԳԱՍ. — ԵՒՐՈՊՈՅԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Աշխարհի հինգ մասերը. — Ինչպէս տեսանք (Ա. Պրակ, էջ 43, Դաս 6), երկրագունտին ցամաքը բաժնուած է չինգ մեծ մասերու. Եւրոպա, Ասիա, Ափրիկե, Ամերիկա, Ովկիանիա:

2. Տանկասան. — Սկսելով մեր գանուած քաղաքէն (կամ գիւղէն)՝ մենք սորվեցանք թէ մեր բնակած երկիրն է Օսմանեան Պետութիւնը, կամ Տաճկաստանը որ բաժին ունի թէ՛ Եւրոպայի, թէ՛ Ասիայի եւ թէ՛ Ափրիկէի մէջ:


3. Եւրոպական պետութիւններն են. — Թուրքիա, Յունաստան, Գարսապ, Ռումանիա, Պուլկարիա, Սերպիա, Փորթուգալ, Սպանիա, Զուիցցերիա, Լիւսեմպուրկ, Հոլանտա, Պելճիա, Տանիմարեա, Շուեհ, Նորվեկիա, Իսպիա, Անգլիա, Գաղղիա, Աւստրիա-Հունգարիա, Գերմանիա, Ռուսիա, ընդամենը 21 հատ: Աստեղ պլտի սորվինք յաջորդ դասերով:

4. Եւրոպայի բնակիչները. Եւրոպայի մէջ կ'ապրին զանազան ազգեր, եւ ընդհանուր անունով կ'ըսուին Եւրոպացի: Իսկ առէն մէկը իր երկրին կամ ազգին մասնաւոր անունով կը կոչուի Անգլիացի, Գաղղիացի կամ Ֆրանսացի, Տանիմարեացի Պելճիացի, Հոլանտացի, Զուիցցերիացի, Շուեհացի, Նորվեկիացի, Լիւսեմպուրկցի, Գերմանացի, Աւստրիացի, Հունգարացի, Տանկասանցի կամ Թուրքիացի, Սերպիացի, Պուլկար, Ռումանիացի, Գարսապցի, Յոյն, Ռուս, Սպանիացի, Բորբուկայցի, Իսպացի:

Եւրոպա ունի 360 միլիոնի չափ բնակիչ: Ա.Մ.Ն.Քն

ալ սպխտակ ցեղէ, և կը բաժնուին երեք մեծ խումբերու Յունա-Լասիւնական խումբ, Գերմանական խումբ և Մշակական խումբ:

1. — Որո՞նք են աւխարհի հինգ մասերը: — 2. Տանկասան աւխարհի ո՞ր մասին մէջ է: — 3. Եւրոպայի մէջ քանի՞ Պետութիւն կայ եւ որո՞նք են: — 4. Ի՞նչ կը կոչուին Եւրոպայի բնակիչները: Ո՞րչափ բնակիչ են: Ո՞ր ցեղէ են: Քանի՞ խումբ:



2. ԳԱՍ. — ԵՒՐՈՊԱՅԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ (Շար.)

5. Անգղիա կամ Մեծն Բրիտանիա. — Կը բաղկանայ երկու մեծ կղզիներէ (Անգլիա և Իռլանտա), որոնք կը կազմեն մէկ Պետութիւն կամ երկիր: Մայրաքաղաք՝ Լոնտոն կամ Լոնտը, (5 միլիոն բնակիչով): Անգլիոյ արդի թագաւորն է Էտուարտ Է.:

Գլխաւոր քաղաքներն են՝ Լիսթրալ (616,000 բնակիչ), Կրասֆ, Էքսիւրը, Տրալիս, Մանչեսթըր:

6. Ֆրանսա կամ Գաղղիա. — Մայրաքաղաք՝ Բարիզ (2 ու կէս միլիոն բնակիչ): Նախագահն է Էմիլ Լուպէ:

Գլխաւոր քաղաքներն են՝ Մարսիլիս, Լիոն, Պորսո, Լիլ, Հալր, Թուլուզ, Նանք, Ռուան, Եւայլն:

7.—8. Շուէս եւ Նորվեկիա.* — Չափ զառ երկիրներ են, բայց ունին մէկ թագաւոր, Ռիքար Բ.:

Շուէտի մայրաքաղաքն է Ստոքոլմ, (280,000 բնակիչ), իսկ Նորվեկիայի մայրաքաղաքն է Բրիսխանիա (150,000 բնակիչ):

Գլխաւոր քաղաքներն են՝ Ուլխալս, Կոթենպուրկ, Պերկեն:


9. Տանիմարա.* — Մայրաքաղաք՝ Բորքենակ (375,000 բնակիչ): Թագաւորն է Բրիսթիան Թ.:

(*) Շուէտ-Նորվեկիա եւ Տանիմարա կը կոչուին Սկանինավեան երկիրներ:

10. Պելիբա. — Մայրաքաղաք՝ Պրիստկ (480,000 բնակիչ): Թագաւորն է Լեոպոլտ Բ.:

Գլխաւոր քաղաքներն են՝ Անկերս, Կան, Լիեժ:

5. — Ո՞րն է Անգղիոյ մայրաքաղաքը. — իսկ գլխաւոր քաղաքները: — 6. Ֆրանսայի՞նք: — 7. Շուէսի՞նք: — 8. Նորվեկիայի՞նք: — 9. Տանիմարայի՞նք: — 10. Պելիբայի՞նք:



3. ԳԱՍ. — ԵՒՐՈՊԱՅԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ (Շար.)

11. Հոլանտա կամ Ստրին Նահանգներ. — Մայրաքաղաք Լա Հե (195,000): Թագաւորն է՝ Վիլհելմինա: Գլխաւոր քաղաքներն են՝ Ամսթըրստ, Ռոթըրստ:

12. Լիւսեմպուրկ. — Կը կոչուի նաեւ Մեծ Դիսնըրիս Լիւսեմպուրկի: Մայրաքաղաք Լիւսեմպուրկ: Թագաւորն է՝ Աստի:

13. Զուիցցերիա. — Բաժնուած է 22 դաշնակից նահանգներու: Կառավարութիւնն կեդրոնն է՝ Պեռն: Նախագահ՝ Պ. Զեմը: Գլխաւոր քաղաքներն են՝ Ժընեւ, Պալ, Յիւրիխ, Լոզան:

14. Գերմանիա. — Կը բաղկանայ 26 մասը Պետութիւններէ, որոնք դաշնակից են՝ և Գերմանական Պետութիւն անունին սակ կը կառավարուին: Ամէնէն մեծ դաշնակից երկիրն է Բրունտա: Միացեալ Պետութիւններուն Վեհապետն է՝ Կիլեով Վիլհելմ Բ., որ կը կոչուի Կայսր Գերմանիոյ և Թագաւոր Բոուսիոյ:

Մայրաքաղաք՝ Պերլին (1,580,000 բնակիչ):

Գլխաւոր քաղաք՝ Պրեսքո, Հանպուրկ, Պրեմ, Բեռլինպերկ, Տաննիֆ, Շթրեքեն, Լայպցիկ, Մանչեսթր, Ֆրանկֆորթ, Բոլոնիս, Մայսն, Սիւրպուրկ, Մեմ:

15. Աւսրիա—Հունգարիա. — Կազմուած է երկու Պետութիւններէ, Աւսրիա և Հունգարական քաղաքապետութիւն, որոնք մէկ Վեհապետ ունին, Ֆրանս-ժողով Կայսր: Աւստրիայի մայրաքաղաքն է Վիեննա (1,365,000 բնակիչ): Հունգարիայի մայրաքաղաքն է Պոստքեշք (506,000 բնակիչ):

Գլխաւոր քաղաքներն են՝ Լեյպտեյկ, Բրախա, Պրիւն, Բրախովյա, Թրիեսք:

11. — Հոլանտան ուրիշ ի՞նչ անուն ունի: Ո՞րն է մայրաքաղաքը: — **12.** Ի՞նչ կը կոչուի Լիւսեմպուրի Պետութիւնը: — **13.** Քանի՞ ցամաքներու համեմատ է Չուիցցերիա եւ ի՞նչպէս կը կառավարուի: — **14.** Ի՞նչ գիտէք Գերմանիոյ վրայ: Ի՞նչ բտել է դաւեակից: Ի՞նչ կը կոչուի Գերմանիոյ Կայսր, եւ ո՞վ է: Ո՞րչափ բնակիչ ունի Պերիլին: Որո՞նք են Գերմանիոյ գլխաւոր քաղաքները: — **15.** Ո՞վ է Ֆրանս-ժողով: Քանի՞ Պետութիւններէ կազմուած է Աւսրիա-Հունգարիա: Որո՞նք են ատենց մայրաքաղաքները:

4. ԴԱՍ. — ԵՒՐՈՊԱՅԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ (Շար.)

16. Թուրքիա կամ Օսմանեան Կայսրութիւն. — Մայրաքաղաք՝ Կ. Պոլիս (900,000 բնակիչ): Վեհապետն է Օզոտտափառ Սուլթան Ապս-իւլ-Համիտ Բ. Կայսր եւ Ինքնակալ: Կ'իշխէ լայնածաւալ երկիրներու և քաղաքութիւ ազգերու վրայ, և կը յորջորջուի Խալիփա: Ծնած է 1840, Նոյեմբեր 14ին և Օսմանեան Գահուն զրաջ քաղմած է 1876 Օգոստոս 19ին:

Գլխաւոր քաղաքներն են՝ էսթրեն, Սեղսնիկ, Եսնեա, Շոքոսու, ևւն, որոնք եւրոպական Թուրքիոյ մէջ են:

17. Պուկարիա. — Թուրքիոյ Գերիշխանութեան սակ: Գլխաւոր քաղաքներ՝ Սոփիա, (ուր կը նստի իշխանը, Ֆերիսնան Բոյարիկի), Ֆիլիպե, Ռուսնուզ, Վառնա, ևւալն:

18. Սերպիա. — Մայրաքաղաքն է Պեկրուս (55,000 բնակիչ): Թագաւորն է Ալեքսանտր:

Գլխաւոր քաղաքներն են՝ Նիշ, Բրակոյեվա, Լեւոյա, Բոժարեվա, Շարա:

19. Ռումանիա. — Մայրաքաղաքն է Պուրեշ (230,000 բնակիչ): Թագաւորն է Կարոլ:

Գլխաւոր քաղաքներն են՝ Կարաջ, Պրայա, Բուրեշ:

20. Կարասալ կամ Սեւ լեռ. — Մայրաքաղաքն է՝ Չեքիլենե (2000 բնակիչ): Թագաւորն է Նիֆոյա:

Գլխաւոր քաղաքներն են՝ Տուշիեթ և Անթիպարի:

21. Յունաստան. — Մայրաքաղաքն է՝ Աթենք (110,000 բնակիչ): Թագաւորն է Եորկիս Ա.:

Գլխաւոր քաղաքներն են՝ Բիրեսա, Բարսա, Շիրա, Բորֆո:

Մանօք. — Այս վերջին հինգ երկիրները կը կոչուին Պալսնեան Պետութիւններ:

16. — Ի՞նչ գիտէք Կ. Պոլսոյ վրայ, (Վերափոխ. Պրակ, էջ 27, Դաս 1 եւ յաջորդներու): — **17.** Ո՞ր երկիւի եւխանն է Ֆերիսնանտ քր Բօպուրի: — **18.** Ո՞րն է Սերպիայի մայրաքաղաքը: — **19.** Ո՞վ է Ռումանիոյ թագաւորը: — **20.** Ո՞վ է Նիփոյա թագաւոր: — **21.** Յունաստանի մայրաքաղաքը եւ գլխաւոր քաղաքները որո՞նք են:

5. ԴԱՍ. — ԵՒՐՈՊԱՅԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ (Շար.)

22. Սպանիա. — Մայրաքաղաքն է Մասրիտ (470,000 բնակիչ): Թագաւորն է՝ Ալֆոնս ԺԳ.:

Գլխաւոր քաղաքներն են՝ Վալենցիա, Միւրսի, Սեւիլլ, Մադրիս, Գասիչէ, Գորուննա և Պալեստեան կղզիներ:

23. Փորթուգալ. — Մայրաքաղաքն է Լիզպոն (310,000 բնակիչ): Թագաւորն է Կարոլոս կամ Շարլ Ա.:

Գլխաւոր քաղաքներն են՝ Բորթո, Բոյիսկարա:

24. Իսալիա. — Մայրաքաղաքն է Հոռով (440, 000 բնակիչ) : Թագաւորն է Վիխրոս Էննսնուռեղ Գ. :

Գլխաւոր քաղաքներն են՝ Նեապոլիս կամ Նաքոլի, Միլան, Վեներիկ, Թուրին, Ճենովա, Յիտիեցա, Լիւրնո, Սքեցիա, Բասուա, Պրիւնիպի, Բալերոն և Մեսինա :

Հռովմ նշանաւոր է իր հումեթիւններով, աւերակներով, եւայն : Հռովմը մէջ է Ս. Պետրոսի եկեղեցին և Վասիլիանի պալատը ուր կը նստի Լեւոն ԺԳ. Պապը :

Վենետիկի մօտ կայ Ս. Ղազար կղզին. հոն է Մխիթարեան Միաբանութիւնն ու վանքը :

25. Ռուսիա. — Մայրաքաղաքն է Ս. Բեղերայուրկ (127,000 բնակիչ) : Ռուսիա ընդարձակ Պետութիւն մ'է որ կը գրաւէ Եւրոպայի կէսն ու Ասիայի կէսը (Սիպերիա) : Վեհապետը կը կոչուի Չար, որ է Նիֆօրս Բ. :

Գլխաւոր քաղաքներն են՝ Մոսկուա (հին մայրաքաղաքն է) : Վարչաւիս (հին մայրաքաղաք Բոյոնիայի կամ Լեհաստանի), Հելսինկիֆորս (հին մայրաքաղաք Ֆինլանդիայի), Թիբլիս (հին մայրաքաղաք Վրաստանի) որ հիմա կեդրոնն է Կաւկասիայի կառավարչութեան, Պաքու, Պաքու, Օսեսա, Բիել, Ռիկա, Սեասսարոյ, եւայն : Կաւկասի բնակիչներն են՝ Ռուս, Հայ, Վրացի, Չերեք, Էւն. Էւն. :

22. — Ո՞նք է Սպանիոյ մայրաքաղաքը : — **23.** Ռոմէն են Բորբուլի մայրաքաղաքն ու գլխաւոր քաղաքները : — **24.** Ի՞նչ գիտէք Իսպիոյ վրայ : Ո՞ր է Միլիթաբեա՞ մեծասանը : Հռովմի մէջ ինչե՞ր կան ճեմաւոր : Ո՞վ է Պապը : — **25.** Ի՞նչ գիտէք Ռուսիոյ վրայ :

6. ԳԱՍ. — ԵՐՐՈՊԱՅԻ ԾՈՎԵԶՆԻՔԸ

26. Ծով ու ծովեզր. — Եւրոպայի Հիւսիսային կողմըն է Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսը որ կը կազ-

մէ ձերեակ ծովը, և կը թրջէ Հիւսիսային հորանդակը, որ Հիւսիսի ամէնէն հեռաւոր ծայրն է :

Եւրոպայի Արեւմտեան կողմն է Ատլանդեան Ովկիանոսը, որուն մաս կը կազմեն Պալքիկ ծովը, Հիւսիսային ծովը, Մակչի ծովը, Կասպնեան ծոցը եւ Միջերկրական ծովը :

Պալթիկ ծովը կը ձեւացնէ Պոքլիի ծոցը եւ նեղուցներով կը միանայ Հիւսիսային ծովուն հետ : Հիւսիսային ծովն ու Մանչը կը միանան Բա սը Գալէ նեղուցով :

Ատլանդեան Ովկիանոսի երեք մեծ կղզիներն են Իռլանտ, և Բրիտանական կղզիները (Իռլանտա և Մեծ-Բրիտանիա) :

Ատլանդեան Ովկիանոսին ու Պալթիկ ծովուն մէջ տեղն է Սկանսիւնալեան քերակոյգին : Պալթիկ ու Հիւսիսային ծովերուն մէջ տեղն է Եուրպանդի քերակոյգին ու շատ մը կղզիներ : Կասպնեան ծոցին Հարաւային կողմն է Իքերեան ցանխակոյգին որ կը ներկայացնէ Ֆինիպիեր և Սեւ-Վեհաստ հրաւանդանները :

Միջերկրական ծովը, որ Ատլանդեան Ովկիանոսին հետ կը հաղորդակցի ձիպրադրոի նեղուցով, կը կազմէ Լիոնի և Ճենովայի ծոցերը, Ագրիական ծովը, Յոնիական ծովը, Տարտանէլի և Վոսիորի նեղուցները, Մարմարա ծովն ու Սեւ ծովը : Միջերկրական ծովուն մէջ են Պալէարեան կղզիները, Գորսիքա, Սարոնիս, Սիկիլիա, Մալթա, Կրեա, նաեւ Իսպիոյ քերակոյգին և Պալանեան ցանխակոյգին :

Եւրոպայի Արեւելեան հարաւակողմը կը գտնուի աղի ջրով մեծ լիճ մը որ կը կոչուի Կասպից ծով :

26. Ռոմէն են Եւրոպայի ծովերը, գլխաւոր հրաւանդանները, քերակոյգիներն ու ցանխակոյգիները, ծոցերն ու կղզիները : (Չաս գտեցէք) :

7. ԴԱՍ. — ԵՒՐՈՊԱՅԻ ԼԵՈՆԵՐԸ

27. Եւրոպայի լեռնաշղթաները. — Եւրոպայի Արեւելեան կողմը (Ռուսիա) ընդարձակ դաշտեր ու հարթավայրեր կան, իսկ Արեւմտեան կողմը մեծ լեռնաշղթաներ:

Ալպեան լեռները, որ Եւրոպայի ամենամեծ լեռնաշղթան կը կազմեն, Եւրոպայի կեդրոնը կը գտնուին: Անոնց գագաթը միշտ՝ ամառ ձմեռ՝ ձիւնով պատած է. ունին անհուն սառնարաններ որ կը կազմուին մեծ մեծ ձորերէ: Աս լեռներու կողին վրայ կան եղեւինի անտառներ և արօտավայրեր:

Ալպեաններէն կը բաժնուին երկու ճիւղեր. Ապենինեան լեռնաշղթայ որ կը ձեւացնէ Իտալիան, միւսը կ'երթայ միանալ Պալման լեռներուն:

Դէպի Արեւմուտք կը գտնուին՝ Յրանսայի լեռնակոյտը և Պիւռէնեան լեռները:

Ալպեաններուն Արեւելքի կողմն է Կարպաթեան լեռնաշղթան:

Եւրոպայի Հիւսիսակողմն են Սկանսինավեան լեռները:

Վերջապէս, Եւրոպան Ասիայէն կը զատուի Կովկասի բարձրաբերձ լեռներով և Ուրալ լեռներով:

27. — Ի՞նչպէս է Եւրոպայի Արեւելեան մասը: Իսկ Արեւմտեան կողմը: Որո՞նք են Եւրոպայի գլխաւոր լեռները:

8. ԴԱՍ. — ԵՒՐՈՊԱՅԻ ԳԵՏՆԵՐԸ

28. Երկու մեծ աւազաններ. — Եւրոպայի գետերը երկու մեծ աւազաններու կը բաժնուին. 1. Արեւմտեան-Հիւսիսային Աւազան, որ Ատլանդեան Ովկիանոսի ու

Սառուցեալ Ովկիանոսին կողմը կ'իջնայ: 2. Հարաւ-Արեւելեան Աւազան, դէպի Միջերկրական ու Կասպից ծովերը:

29. Արեւմտեան-Հիւսիսային աւազան. — Աս կողմի գետերն են. Տոլնա, Վիստուլա, Օսեր որ կը թափին Պալդիկ ծովը: Էլպա, Հոնոնս, Մոզ, Դալիզ որ կը թափին Հիւսիսային ծովը: Սեկ որ կը թափի Մանչի ծովը: Լուառ, Կարոն, Դալո որ կը թափին Ատլանդեան Ովկիանոսին մէջ:

30. Արեւելեան-Հարաւի աւազան. — Աս կողմը կը գտնուին Էպրո, Ռոն որ կը թափին Միջերկրական ծովը: Տիբերիս որ Իտալիոյ թերակղզիին մէջ է: Փո՝ որ Ադրիական ծովը կը թափի: Դանուբ, Տեիքեր և Տոն կը թափին Սեւ ծովը: Վոլխա, որ կը թափի Կասպից ծովը, Եւրոպայի ամէնէն մեծ գետն է:

Ուրալ գետը որ նոյնպէս կը թափի Կասպից ծովը և նոյն ծովէն սկսեալ մինչև Ուրալ լեռները՝ Եւրոպան Ասիայէն զատող սահմանագիծն է:

28. — Որո՞նք են Եւրոպայի երկու մեծ աւազանները: — 29. Հիւսիսային Արեւմտեան աւազանին գետեր որո՞նք են: — 30. Հարաւային Արեւելեան աւազանին գետեր որո՞նք են:

Հրահանգ

Այբուբենի կարգով գրեցէք. 1. Եւրոպայի Վեհագետներուն անունը, — 2. Եւրոպայի Պետութեանց մայրաքաղաքներուն անունը (բնակիչներով): — 3. Եւրոպայի մէջ ապրող գանազան ազգերուն անունը եւ կրօնը: — 4. Ի՞նչ լեզուներ կը խօսուին Եւրոպայի մէջ: — 5. Եւրոպայի ծովերուն ու գետերուն անունը՝ միշտ այբուբենի կարգով:

Թ Ո Ւ Ա Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

1. ԴԱՍ. — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՒՄԸ

1. Երբ միևնակ բաժանելին սասնորդական է. — Երբ բաժանելին տասնորդական է և բաժանարարն ամբողջ

58,65		17
76		3,45
85		
00		

Թիւ, գործողութիւնը կը կատարենք ամբողջ թիւերու պէս, յետոյ քանորդին աջ կողմէն ստորակէտով կը զատենք ա'յնքան տասնորդական, որքան կը գըտնուի բաժանելիին մէջ: Այսպէս՝ 58,65՝ բաժանեալ 17, կուտայ 3,45

քանորդ, իսկ 6,96՝ բաժանեալ 58՝ կուտայ 0,12 քանորդ:

1. — Տասնորդական թիւ մը ամբողջով բաժնելու կտոնը ի՞նչ է:

Վարժուքիւն. — **1—10.** Բաժնել. 5,7:3 — 8,7:4 — 27,4:3 — 4,34:17 — 438,27:54 — 78456:92 — 0,548:32 — 0,017:8 — 728,43:11 — 0,111:11:

2. ԴԱՍ. — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՒՄԸ (Շար.)

2. Երբ բաժանելին ու բաժանարարը սասնորդական թիւեր են. — Առաջին օրինակ. — Երբ թէ՛ բաժանելին

478,653:7,32		
Պէտք է գրել		
47865,3		732
3945		65,3
2853		
657		Մնացորդ

թէ՛ բաժանարարը տասնորդական թիւեր ունին, բաժանարարի ստորակէտը վերցնելու և զայն ամբողջ թիւ ընելու է, բայց միեւնոյն ատեն բաժանելիին ստորակէտը աջ կողմը տանելու է այնքան թիւ, որքան տասնորդական

կը գտնուէր բաժանարարին մէջ: Այսպէս, 478,653ը 7,32ով բաժնելու համար, նախ՝ բաժանարարը 732 գրելու է և բաժանելին 47865,3:

2. Տասնորդական թիւ մը ուրիշ սասնորդականով ի՞նչպէս կը բաժնէ:

Վարժուքիւններ. — **11—17.** Բաժնելու է. 572,3:47,8 — 279,48:31,57 — 48,375:5,7 — 798,56:0,78 — 0,485:0,38 — 0,0567:0,007 — 4,007:0,05:

3. ԴԱՍ — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՒՄԸ (Շար.)

3. Երբ բաժանելին ու բաժանարարը սասնորդական են. — Երկրորդ օրինակ. — Կրնայ ըլլալ որ բաժանելիին

374,8:7,926

Պէտք է գրել		
374800		7926
57760		47
2278		Մնացորդ

տասնորդականները պակաս ըլլան բաժանարարին տասնորդականներէն. — այն ատեն բաժանելիին աջ կողմը աւելցնելու է ա'յնքան զերո որքան պէտք է բաժանարարին տասնորդականներուն հաւասարեցնելու համար: Այսպէս, 374,8ը 7,926ով բաժնելու համար, պէտք է բաժանարարը նախ ամբողջ գրել 7926, և բաժանելիին աջ կողմը երկու զերո դնել. 374800:

4. Երբ բաժանելին ամբողջ թիւ է. — Կրնայ ըլլալ որ բաժանելին ամբողջ թիւ ըլլայ, իսկ բաժանարարը տասնորդականներ ունենայ. — այն ատեն

Պէտք է գրել		
37400		236
1380		158
2000		
112		

բաժանելիին աջ կողմը բաժանարարին տասնորդականներուն չափ զերո աւելցնելու է. ինչպէս կը ցուցնէ քովի օրինակը:

5. Երկու ամբողջ թիւերու մօտաւորագոյն քանակը — Երբեմն երկու ամբողջ թիւեր իրարու մէջ ճիշդ չեն

18	7
40	2,57
50	
1	Մնացորդ

բաժնուիր: Այն աստեղ կրնանք մնացորդին աջ կողմը զերօնէր դնել և բաժանումը շարունակել, քանորդին առջեւ տասնորդականներ դնելով: Այսպէս, 7ը 18ին մէջ

երկու անգամ կայ՝ 4 կ'աւելնայ, շը քանորդին ամբողջ թիւը կը կազմէ. 4ին առջեւ 0 կը դնենք և ելած քանորդը իբրեւ տասնորդական կը գրենք: Այսպէս կը գտնենք այդ երկու ամբողջ թիւերուն մօտաւորագոյն քանորդը:

6. Փորձ. — Տասնորդականներու բաժանումին փորձը ճիշդ ամբողջ թիւերու փորձին պէս է:

3. — Ի՞նչպէս կը բաժնէք երկու ասանդական թիւեր, երբ բաժանելին բաժանարարէն պակաս ասանդակներ ունի: — 4. Երբ բաժանելին ամբողջ թիւ է՝ այն ասեմ ի՞նչպէս կ'ընէք: — 5. Ի՞նչպէս կը գտնէք երկու ամբողջ թիւերու մօտաւորագոյն քանակը: — 6. Երկու ասանդական թիւերու բաժանումին փորձը ի՞նչպէս կ'ընէք:

Վարժուրի նմեր. — 18—22. Բաժնենք. 57,82:47,345 — 279,8:9765 — 14:7,495 — 1,078:0,97 — 0,006:0,0007: — 23. Գործարար մը օրը կը վաստկի 12,5 դր. կիրակի օրերը չ'աշխատիր, և օրը կը ծախսէ 8,25 դր. մէկ շաբաթուան մէջ ինչ կ'աւելցնէ. 52 շաբաթուան մէջ որչափ կը խնայէ:

4. ԴԱՍ. — ՄԵԳՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐԸ

7. Մեղրական դրութիւն. — Այն բոլոր չափերը որ մեղրի վրայ հիմնուած են, ամէնքը մէկտեղ մեղրական դրութիւնը կը կազմեն:

8. Երկայնութիւն մը ի՞նչպէս կրնանք չափել. — Ո՛ր եւէ երկայնութիւն կրնանք չափել մեղրով կամ արշընով կամ ոսփով, եթէ ուղենք փնտուել թէ այն երկայնութեան մէջ քանի՞ մէդր, քանի՞ արշըն կամ քանի՞ ոտք կայ: Օրինակ՝ կ'ըսենք. մեր փողոցը 26 մէդր երկայնութիւն ունի, կամ սա կտաւը 6 արշըն կուգայ, կամ սա սենեակը 12 ոտք լայն է:


7. — Ի՞նչ է մեղրական դրութիւնը: — 8. Երկայնութիւն մը ի՞նչպէս կրնանք չափել:

Վարժուրի նմեր. — 24—27. Սա բաժանումներն ընել. 148:57 — 39:7 — 738:13 — 4588:173, և ասոնց մօտաւորագոյն քանորդ գտնել 0,1 (մէկ տասնորդականով) 0,01 (երկու տասնորդականով) կամ 0,001 (երեք տասնորդականով): — 28. Տղու մը մազերը 38 օրուան մէջ 1 հարիւրորդամէդր երկնցած են. գտէք թէ մէկ օրուան մէջ որչափ և մէկ ժամուան մէջ որչափ երկնցած են. (օրը 24 ժամ հաշուելու է):

5. ԴԱՍ. — ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐԸ (Շար.)

9. Մէդր. — Մեղրը երկրի շրջապատին քառասուն միլիոններով (40,000,000) մասն է:

10. Մեղրին այլեայլ ձևերը. — Մէդրը այլեայլ ձևերով ու այլեայլ նիւթերէ շինուած կ'ըլլայ: Փայտէ, երկաթէ կաշիէ, կտաւէ ևն.:



Պատկ. 1 Մալուած մեղր

Երբեմն սա քովի պատկերին պէս ինք իր վերայ ծալուած է, երբեմն պզտիկ տուփի մը մէջ ամփոփուած է զոր

դերձակները կը դործածեն, երբեմն ալ փայտէ շինուած է և վաճառականները անով կերպասի մը երկայնութիւնը կը չափեն :

9. — Մեղրի մը երկայնութիւնը ո՞րչափ է : — 10. Մեղրին զանազան ձևերը որո՞նք են :

Վարժութիւններ. — 29. Խանութեան մը 8 երկոտանեակ հաւկիթ գնեց՝ երկոտանեակը 0,875 զրշ.ի. բայց 7 հատ հաւկիթ կոտրեցաւ. հիմա ամէն մէկ հաւկիթը բանիի ծախելու է որ 4.25 զրշ. վաստկի :

6. ԴԱՍ. — ԵՐԿԱՑՆՈՒԹԵԱՆ ՁԱՓԵՐԸ (Շար.)

11. Մեղրին բազմապատիկներ. — Մէկ սասնաւեղոր (ՏՃ.) որ 10 մէդր երկայն է : Մէկ հարխրաւեղոր (ՀՃ.) որ 100 մէդր երկար է : Մէկ հազարաւեղոր (ՀԳՃ.) որ 1000 մէդր երկայն է : Մէկ թխրաւեղոր (ԲՃ.) որ 10000 մէդր



Պատկ. 2. — Երկաթէ սասնաւեղոր (անդաչափի շղթայ) :

երկայն է(*) : Տասը հատ երկաթէ մէդր իրարու միանալով կը կազմեն երկայն չղթայ մը որ սասնաւեղոր կը կոչուի, որով մեծ երկայնութիւնները կը չափեն :

11. — Որո՞նք են մեղրին բազմապատիկները : Ի՞նչ է անոնց ամէն մէկուն երկայնութիւնը : Սովորաբար Տասնաւեղոր ի՞նչ ձևէ կ'ըլլայ :

Վարժութ. — 30. Տանտիկին մը գնեց 12,50 մէդր ֆանելա, մէդրը 8,25 զրշ էն, 8,35 մէդր խասա, մէդրը 3,75 զրշ.էն, և 25 մէդր կըտուա (ամբիգան) մէդրը 2,50 զրշ.էն, և խանութեանին տուաւ 2 Օամ. ոսկի (108 զրշ.էն), բանի՞ զրշ. ետ պիտի առնէ :

(*) Ծան. — Բազմապատիկներուն համաօտարուծիւնը զխազրով կը սկսի, իսկ ստորաբաժանումներունը պարզ զրով :

7. ԴԱՍ. — ԵՐԿԱՑՆՈՒԹԵԱՆ ՁԱՓԵՐԸ (Շար.)

12. Մեղրին ստորաբաժանումներ. — Մէկ սասնորդաւեղոր (ԴՃ.) որ 0,1 մէդր երկայն է : Մէկ հարխրորդաւեղոր (ՀՃ.) որ 0,01 մէդր երկայն է : Մէկ հազարորդաւեղոր (ՀԳՃ.) որ 0,001 մէդր երկայն է : Մէկ սառը հազարորդաւեղոր կամ թխրորդաւեղոր (ԲՃ.) որ 0,0001 մէդր երկայն է :

1	2	3	4	5	6	7	8	9	10

Պատկ. 3. — Հարխրորդաւեղորի և հազարորդաւեղորի բաժնուած Տասնորդաւեղոր (իսկական երկայնութիւն)

Սա վերի (թիւ 3) պատկերը կը ցուցնէ մէկ տասնորդամէդր որ բաժնուած է տասը հատ հարիւրորդամէդրի և մէկ հարիւրորդամէդրն ալ բաժնուած է 10 հատ հազարորդամէդրի :

Երբ մէկ մէդրէն պակաս երկայնութիւններ ուղենք չափել, տասնորդամէդր, հարիւրորդամէդր, հազարորդամէդր, բիւրորդամէդր կը գործածենք :

12. — Մեղրին ստորաբաժանումները որո՞նք են : Անոնց երկայնութիւնը ո՞րչափ է :

Վարժութիւններ. — 31. Վաճառական մը տարին 255 նամակ կը զրկէ՝ ամէն մէկուն վրայ փակցնելով 3,25 զրշ ի դրոշմաժողով (փուլ), 2650 նամակ՝ իւրաքանչիւրը 1 զրշ.ի փուլ, 1210 հատ գառդ-բոսթալ՝ ամէն մէկուն 0,50 զրշ. տալով, վերջապէս 765 ծրար, ամէն մէկուն 5,75 զրշ. դրոշմաժողով փակցնելով : Ո՞րչափ զրամ այս վաճառականը կը ծախսէ իր թղթակցութեանց համար :

8. ԴԱՍ. — ԵՐԿԱՑՆՈՒԹԵԱՆ ՁԱՓԵՐԸ (Շար.)

13. Երկայնութիւն ցուցնող բիւրը ի՞նչպէս պէտք է գրել և ի՞նչպէս կարդալ. — 1. Արդէն տեսանք որ եր-

կայնութեան չափերը իրարմէ տասնական անգամ մեծ են . ուրեմն երկայնութիւն ցուցնող թիւ մը կրնանք գրել, ճիշտ տասնորդական թիւերու պէս :

2. Այս տեսակ թիւ մը գրած ատեննիս, պէտք է որ միութիւնները ցուցնող թիւին վրայ, ստորակէտէն առաջ, անոր անունը գրենք: Օրինակ՝ 5 մէզը 30 տասնորդամէզը պէտք է գրել 5,430: 18 հազարամէզը 265 մէզը կը գրուի՝ 18,4265: Այսպէս միւսներն ալ :

3. Երկայնութիւն ունեցող թիւերը տասնորդական թիւերուն պէս կը կարգացուին. այսպէս 8,435 կարգաւորու է՝ 8 ամբողջ 35 հարիւրորդ (մէզը) :

13 — 1. Ի՞նչ կանոնով կրնանք գրել երկայնութեան չափ ցուցնող թիւերը : 2. Այդ թիւին միութիւնը ի՞նչ կերպով կը ցուցուի : — 3. Ի՞նչպէս կարգաւորու է երկայնութիւն ցուցնող թիւերը :

Վարժուքիւններ. — **32-37**. Հետեւեալ թիւերը ժուանշանով գրեցէ՛ք՝ մէզը առնելով իրրեւ միութիւն . 7 մէզը 25 հարիւրորդամէզը, 482 հարիւրորդամէզը, 23 տասնորդամէզը, 42 հազարամէզը, 257 տասնամէզը, 23 հազարորդամէզը :

9. ԳԱՍ. — ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐԸ (Շար.)

14. Երկայնութեան միութիւնը փոփոխել. — 1. Երկայնութեան մը միութիւնը կրնանք փոխել, անոր տեղ իրմէ բարձր կամ իրմէ ստորին բազմապատիկները գործածելով . այսպէս 8,435ը կրնայ գրուիլ 83,45 (83 տասնորդամէզը 5 հարիւրորդամէզը) . կամ 835 հրձ. (ութը հարիւր երեսունը հինգ հարիւրորդամէզը), կամ 0,8435 (մէկ բիւրամէզը 2265 մէզը) կամ 122,465, եւ այլն :

2. Երկայնութիւն ցուցնող թիւերուն վերեւը գրուած գրերը այն երկայնութեան հարստօսագրութիւնը կը ցուցը-

նեն : Երբ ուղենք թիւի մը միութիւնը փոխել, ստորակէտը կը դնենք մեր ուղած տեղը և համաօսագրութիւնն ալ կը գրենք ստորակէտին վերեւը :

14. — 1. Միեւնոյն երկայնութիւնը արքեր միութիւններով ցուցրնել կարելի՞ է : 2. Ի՞նչ կ'ընէք թիւի մը միութիւնը փոխելու համար,

Վարժուքիւններ. — **38-46**. Հետեւեալ թիւերը գրով գրեցէ՛ք . 53,412; 5,42188; 62,447; 0,4237; 2,457; 17,423; 17,428; 7,4025; 57,84873; — **47**. Վաճառական մը մէկ ծրար կերպս գնեց մէզը 12,75 դրձի . հիմա կ'ուզէ մէկը գրուի 2,50 վասակիլ . ուրեմն 8 մէզը քանի դրձի ծախելու է :

10. ԳԱՍ. — ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐԸ (Շար.)

15. Ճամբու երկայնութիւնը. — 1. Ճամբաներու երկայնութիւնը կը չափեն հարիւրամէզրով (Հձ.) հազարամէզրով (ՀԿձ.) և բիւրամէզրով (Բձ.) :

2. Կանոնաւոր խճուղիներու և բոլոր երկաթուղիներու ճամբաներուն վրայ՝ ամէն մէկ հազար մէզրին՝ քար մը տնկուած է և վրան թիւեր նշանակուած՝ որ կը ցուցնեն թէ ճամբան մինչեւ հոն քանի՞ հազարամէզրի հասած է :

15. — 1. Ճամբու երկայնութիւնը ի՞նչպէս կը չափուի : 2. Խնուղիներու եւ երկաթուղիներու ճամբան սնկուած բարեուն վրայի թիւերը ի՞նչ կը նշանակեն :

Վարժուքիւններ. — **48**. Գիւղացի մը կ'ուզէ քաղաք գալ որ իրենցմէ 26,480 հեռու է, մէկ վայրկենի մէջ զիւղացին կ'առնէ 120 քայլ, իր ամէն մէկ քայլը 70 հարիւրորդամէթը երկայնութիւն ունի . քանի ժամէն կը հասնի քաղաքը : — **49**. Աղբիւր մը քաղաքէն 1256,5 մէզը հեռու է, այս աղբիւրը քաղաք բերելու համար քանի ագուգայ կ'երթայ եթէ ամէն մէկ ագուգային երկայնութիւնը 65 հարիւրորդամէզը ըլլայ : — **50**. Գիւղացի մը իրենց մատակայ զիւղը երթալու համար արդէն 2,425,507 քալած է, ու կը հաշուէ որ զեռ 25 հարիւրամէզը ճամբայ ունի . կրնա՞ք ըսել թէ երկու զիւղերը քանի մէկը իրարմէ հեռու են :

11. ԴԱՍ. — ՄԱԿԵՐԵՆՈՅԹԻ ԶԱՓԵՐԸ

16. Ի՞նչ բան է մակերեւոյթը. — Բակի մը, պարտէզի մը, դաշտի մը մակերեւոյթը այն բակին, այն պարտիզին, դաշտին տարածութիւնն է: Ընդհանրապէս բանի մը մակերեւոյթ ըսելով, կը հասկնանք այդ առարկային այն մասը որ կը տեսնուի: Խնձորի մը, կաղամարի մը մակերեւոյթը՝ խնձորին, կաղամարին այն մասն է որ կը տեսնուի: Մակերեւոյթը թանձրութիւն չունի:

16. — Ի՞նչ է առարկայի մը մակերեւոյթը:

Վարժուքիւններ. — 51—56. Գրեցէք համաօտարուծեան տեղ ամբողջ տնունը նշանակելով. 43Հւ. 7Բ. 23Գ. 149Հ. 134Տ. 83Կ. — 57. Եթէ 3. 254Գ. կտորէ մը 75Գ. կտրեն, ինչ կը մնայ անդին. — 58. Խումբ մը գործուորներ 3 հարիւրամէր ճամբայ շինած են արդէն եւ դեռ 50 տասնամէր այ շինելու են որ գործը աւարտի. այն տանն քամի հարիւրամէր շինած կ'ըլլան: — 59. Սուրհանդակ մը 16 ժամէն 5 կայարան անցաւ. Ա. կայարանը Բ.էն 12, Հւ. 675 հեռու էր. Բ.ը Գ.էն 27, Հւ. 585 հեռու էր. Գ.ը առաջին երկուքին չափ. Գ.ը 58, Հւ. 608 հեռու էր. վերջապէս Ե.ը վերջինին կիսուն չափ հեռաւորութիւն ունէր. կրնա՞ք ըսել թէ Ա. կայարանը Ե. կայարանէն որչափ հեռու էր. այսինքն քանի հազարամէրը. եւ սուրհանդակը մէկ ժամէն քանի հազարամէր կտրեց, եթէ 2 ժամ կորսնցուց ձիերը փոխելով. — 60. Իրարմէ հանել 25, Հւ. 450—1, Բ. 6540.

12. ԴԱՍ. ՄԱԿԵՐԵՆՈՅԹԻ ԶԱՓԵՐԸ (Շար.)

17. Քառակուսի մեզր. — 1. Մակերեւոյթները չափելու համար գլխաւորապէս կը գործածուի քառակուսի մեզրը (քում.) որ քառակուսի տարածութիւն մ'է, չորս կողմերը մէյմէկ մէզր երկայն:

2. Քառակուսի մէզրը՝ քառակուսի մ'է, որուն մէկ կողմը մէկ մէզր է:

17. — 1. Մակերեւոյթի չափերուն գլխաւոր միութիւնը ո՞րն է: — 2. Ի՞նչ է քառակուսի մէզրը:

Վարժուքիւններ. — 61. Մարդու մը մէկ քայլը միջին հաշուով 0,86 երկայն եթէ ըլլայ, այս մարդուն 100 քայլը քանի տասնամէր կ'ընէ: Եթէ այս մարդը 47,512 քայլ առնէ, քանի հազարամէր տեղ քալած կ'ըլլայ. — 62. Բառարան մը 520 թուգթ ունի, ամէն մէկ թուգթը մէկ հազարորդամէրին 9ը հարիւրորդին չափ (0,001 × 0,09) թանձր. Բառարանին երկու կողերէն ամէն մէկն ալ 3 հազարորդամէր թանձրութիւն ունի. կրնա՞ք ըսել թէ այս բառարանին ամբողջ հաստութիւնը որչափ է:

13. ԴԱՍ. ՄԱԿԵՐԵՆՈՅԹԻ ԶԱՓԵՐԸ (Շար.)

18. Քառակուսի մեզրին բազմապատիկները. — Շատ մեծ մակերեւոյթները՝ օրինակ՝ մեծ ազարակ մը, դաշտ մը, ամբողջ գիւղի մը կալուածքը, ամբողջ գաւառ մը՝ չափելու համար քառակուսի մէզրին բազմապատիկները կը գործածեն:

Աւասիկ այդ բազմապատիկները: Քառակուսի սասնակեղը (+ՏՏ.), ամէն մէկ կողմը մէկ տասնամէրը: Քառակուսի ի յիւրակեղը (+ՀՀ.) ամէն մէկ կողմը մէկ հարիւրամէրը: Քառակուսի հազարակեղը (+ՀՀՀ.), ամէն մէկ կողմը մէկ հազարամէրը: Քառակուսի բիւրակեղը (+ԲԲ.), ամէն մէկ կողմը մէկ բիւրամէրը:

19. Քառակուսի մեզրին ստորաքաժանուները. — Պշտիկ մակերեւոյթները չափելու համար քառակուսի մէզրին ստորաքաժանուները կը գործածուին:

Աւասիկ այդ ստորաքաժանուները: Քառակուսի սասնորդակեղը (+ԳԳ.)՝ ամէն մէկ կողմը մէկ տասնորդամէրը: Քառակուսի հարիւրորդակեղը (+ՀՀ.), ամէն մէկ կողմը մէկ հարիւրորդամէրը: Քառակուսի ճագարորդակեղը (+ՀՀՀ.), ամէն մէկ կողմը մէկ հազարորդամէրը:

18. — Քառակուսի մեղրին բազմապատկերը որո՞ց է եղ : —
19. Իսկ ստորաբաժանումները որո՞ց է եղ :

Վարժուքիւններ. — 63. Մարդ մը իր հողերուն յատակաբիզը
Յուզթի վրայ հանած է. այնպէս որ իրականէն 100 անգամ աւելի փոքր
առած է չափերը. եթէ Յուզթի վրայ 352 հազարորդամէրը լայնութիւն նշա-
նակուած է, այս հողերուն իրական լայնութիւնը քանի մէր է :

14. ԴԱՍ. — ՄԱԿԵՐԵՒՆՅՅԹԻ ՉԱՓԵՐԸ (Շար.)

20. Մէկ քառակուսի մը կ'արժէ 100 քառ. սասնորդամէր.
— Գծենք քառակուսի մը Ա. Բ. Գ. Դ., որուն ամէն մէկ

Ա	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										Բ
2										1
3										2
4										3
5										4
6										5
7										6
8										7
9										8
10										9
Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10

Պատկ. 4

Քառ. մէր եւ 100 քառ. սասնորդամէր
միասիննք : Համընք հիմա սա սղտիկ քառակուսինե-
րը . 100 հատ են անտնք, և անտնց ամէն մէկ կողմը
մէկ տասնորդամէր է : Ուրեմն մէկ քառ. մէրը կը
պարունակէ 100 քառ. տասնորդամէր :

21. Մակերեւոյթի միութիւններ իւրա՞մէ 100ական
անգամ աւելի մեծ են . — Քառակուսի մէրըն ստորա-
բաժանումներն են .

- Քառ. հազարորդամէր (10⁴):
- Քառ. հարիւրորդամէր (10²); կ'արժէ 100 քառ. հազարորդամէր :
- Քառ. սասնորդամէր (10¹), կ'արժէ 100 քառ. հարիւրորդամէր :
- Քառակուսի մէրը (10⁰), կ'արժէ 100 քառ. տասնորդամէր :
- Քառակուսի մէրըն բազմապատիկները :
- Քառ. սասնամէր (10³), կ'արժէ 100 քառ. մէր :
- Քառ. հարիւրամէր (10²), կ'արժէ 100 քառ. տասնամէր :
- Քառ. հազարամէր (10¹), կ'արժէ 100 քառ. հարիւրամէր :
- Քառ. քիւրամէր (10⁰), կ'արժէ 100 քառ. հազարամէր :

20. — Մէկ քառակուսի մէրը քանի՞ քառակուսի սասնորդա-
մէր կ'արժէ : — 21. Որո՞ց է եղ քառակուսի մէրին ստորաբաժա-
նումներն ու բազմապատկերը : Ի՞նչ է անոնց արժէքը :

15. ԴԱՍ. — ՄԱԿԵՐԵՒՆՅՅԹԻ ՉԱՓԵՐԸ (Շար.)

22. Ի՞նչպէս գրելու է մակերեւոյթի չափերը ցուցնող
քիւերը. — 1. Տասնորդական թիւերու պէս կը գրուին
ասոնք ալ, բայց պարսկերէնով որ անեւ մեկ միութիւնը եր-
կուրուանշանով գրուի, եւ երբ իրեւ անմիջապէս վեր
գտնուած կարգը պակսի, պակասիկն սեղ երկու գերոյրուի :

2. Օրինակ. 17 քառ. մէրը 34 քառ. տասնորդա-
մէրը կրնանք ստպէս՝ 17,10⁻²34 գրել, որովհետեւ քառ. մէրըն անմիջապէս քառ. տասնորդամէրը կը յաջորդէ, որ հոս երկու թուանշանով ցուցուած է : Իսկ 5 քառ. մէրը 25 քառ. հարիւրորդամէրը չենք կրնար ստպէս՝ 5,10⁻²25 գրել, որովհետեւ հոս 25ը տասնորդամէր կը կարգացուի, այլ պէտք է գրել 5,10⁻²0025 :

22. — 1. Ի՞նչպէս կը գրէք մակերեւոյթի չափերը ցուցնող քիւ-
ւերը: — 2. Օրինակներ տուէ՛ք:

Վարժուքիւններ. — 64—68. Թուանշաններով եւ միութիւննե-
րու սկզբնատառերով գրեցէք. 34 քառ. մէր եւ 2758 քառ. հազարորդա-
մէր: 328 քառ. հարիւրորդամէր եւ 12 քառ. հազարորդամէր 17
քառ. մէր եւ 23 քառ. հարիւրորդամէր: 438 քառ. տասնամէր եւ 8
քառ. մէր: 100 քառ. մէր եւ 14 քառ. հազարորդամէր:

16. ԴԱՍ. — ՄԱԿԵՐԵՒՈՑԹԻ ԶԱՓԵՐԸ (Շար.)

23. Ի՞նչպէս կարդալու է մակերեւոյթի չափերը ցուցնող
քիւերը. — Այս տեսակ թիւ մը կարդալու համար, ձախ
կողմէն սկսեալ երկու երկու բաժնեցէք թիւը եւ ամէն
մէկ զոյգ թիւը առանձին կարդացէք, անոր միութեան
անունը տալով: 73, +ւ. 5312 թիւը կը կարդացուի 72
քառ. մէր, 53 քառ. տասնորդամէր եւ 12 քառ. հա-
րիւրորդամէր: Եթէ վերջին հատուածը զոյգ չըլլայ,
կրնանք մտքով զերօ մը աւելցնել անոր ծայրը. այսպէս՝
3, +ւ. 567ը կը կարդացուի 3 քառ. մէր 56 քառ. տաս-
նորդամէր եւ 70 քառ. հարիւրորդամէր:

23. — 1. Ի՞նչպէս կարդալու է մակերեւոյթի չափ ցուցնող
քիւ մը: 2. Օրինակներ տուէ՛ք:

Վարժուքիւններ. — 69—74. Գրով գրեցէք հետեւեալ թիւերը.
27, +ւ. 4568; 23, +ւ. 0245; 0, +ւ. 4529; 0, +ւ. 0307; 0, +ւ. 47;
0, +ւ. 4:

17. ԴԱՍ. — ՄԱԿԵՐԵՒՈՑԹԻ ԶԱՓԵՐԸ (Շար.)

24. Կալ (Ար). — 1. Արտերը, դաշտերը չափելու
համար կը գործածուի կալ (Քրանսերէնը՝ ար) (կ) որ մեկ
խառնակուսի քանակուոր է:
2. Մէկ կալը, ուրեմն, 100 քառ. մէր կ'արժէ:

3. Հարիւրակալը (Հեքար) (հկ.) կալին բազմապատիկն
է որ կ'արժէ 100 կալ:

4. Հարիւրորդակալը (Սանդիար) (հրդ.) արին ստորա-
բաժանուէն է որ մէկ կալէն 100 անգամ փոքր է:

5. Հետեւաբար, հեքարը կ'արժէ 100 անգամ 100
քառ. մէր, այսինքն՝ 10,000 քառ. մէր. ուստի հա-
ւասար է քառ. հարիւրամէրին: Հարիւրորդակալը կամ
Սանդիարը կ'արժէ մէկ քառ. մէր:

25. Երկրագործական չափեր. — 1. Ար, Սանդիար
եւ Հեքար (կալ, հարիւրորդակալ եւ հարիւրակալ) երկրա-
գործական չափեր կ'ըսուին, որովհետեւ ասոնցմով կը
չափեն արտերը:

2. Բայց Թուրքիոյ մէջ արտերը չափելու համար կը
գործածուի սեօկիւնը որ 40 քառ. արչն է:

24. — 1. Արսի մը մակերեսը չափելու (կամ անդաչափութեան)
համար ի՞նչ միութիւն կայ: 2. Մէկ կայր քանի՞ քառակուսի մեր է:
3. Կալին բազմապատիկը ո՞րն է: 4. Կալի ստորաբաժանումը ո՞րն է:
5. Հեքարն ու սանդիարը քանի՞ քառ. մեր կ'արժեն: — 25. 1. Երկ-
րագործական չափ ո՞ր չափերուն կ'ըսուի: 2. Թուրքիոյ մէջ արտերը
չափելու համար ի՞նչ կը գործածուի: 3. Քանի՞ քառակուսի արտն
է սեօկիւնը:

Վարժուքիւններ. — 75. Երկրագործ մը ունի երեք կտոր արտ,
առաջինին մակերեւոյթն է 1 Հեքար 78. երկրորդինը 135 ար, երրորդինը
7 Հեքար 504 ար. զոտք Թէ երկրագործին հողերը բանի կալ տարածու-
թիւն ունին: — 76—79. Քանի սանդիար կայ 34 քառ. տասնամէր-
րին, 23 քառ. Հի.ին եւ 12 քառ. Հվ.ին եւ 3 քառ. Բի.ին մէջ: 80.
Երկամի ձող մը 12 մէր երկայն է. ասկէ բանի հատ զամ կրնայ շինուիլ,
եթէ ամէն մէկ զամը 4 հարիւրորդամէր երկայն ըլլայ: — 81. Եթէ 47.85
ով ձեռք մը զգեստ շինուի, 35.1.95ով բանի ձեռք կրնայ շինուիլ —
82. Մոմին երկայնութիւնն է 0,7.27 եւ վառած ատեն մէկ վարկեանի
մէջ կը սպառի 0,1.0015. Տրչափ ատենէն կը սպառի այս մոմը: — 83.
Արտ մը որ 87 ար 35 տարածութիւն ունի, կ'արժէ 1,346 դրուշ. Ինչ
կ'արժէ Հեքարը, ինչ կ'արժէ սանդիարը: — 84. 26 հնձող 45 Հեքար

մակերևոյթ ունեցող արտ մը կը հնձնն 9 օրուան մէջ : Օրը քանի՛ ար կը հնձնն , եւ անոնցմէ ամէն մէկը քանի՛ զրշ. կը շահի, եթէ այս աշխատութեան համար 1586 զրշ. ստանան : — 85. Կառքի մը մեծ անիւին շըրջանակը 4,354 հազարորդամէկը մեծութիւն ունի : Ճամբորդութեան մը մէջ այս անիւը 22,748 անգամ շրջան ըրաւ : Ճամբուն երկայնութիւնը ինչ է բիւրամէրրի հաշուով :

18. ԴԱՍ. — ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԶԱՓԵՐԸ (Շար.)

26. Քառ. մէկըը ի՞նչպէս կը բացատրուի հէքարով, արով, սանդիարով. — Կ'ուղենք 5,236,782 քառ. մէդըը ցուցնել հէքթարով, արով և սանդիարով : Գիտենք որ մէկ սանդիարը՝ մէկ քառ. մէդըը է, ուրեմն այս թիւին համար կրնանք ըսել, 5,236,782 հրէ. (սանդիար) :

Որովհետեւ արը 100 քառ. մէդըը կ'արժէ, ուրեմն այս թիւը արով կը ցուցնենք զրելով 52,367,82 :

Հէքթարով ալ կրնանք ցուցնել այս թիւը, սապէս. 523,67,82 հրէ. Կա՛ պարզապէս 5,23,67,82, քառ. նի որ հէքթարը 100 անգամ աւելի մեծ է արէն :

Ուրեմն քառակուսի մէդըը սանդիարով, արով, հէքթարով ցուցնելու համար, միութիւնը ցուցնող թիւը ստորակէտով բաժնելէ յետոյ, ստորակէտին վերեւը դընելու է միութիւնը ցուցնող համաօտազրուութիւնը :

26. — Ի՞նչ բնելու է որ քառակուսի մէդըը վերածուի հէքարի, արի եւ սանդիարի :

19. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ՈՒԹԵՐՈՐԿ ԵՄՍՈՒԱՆ (1—3)

Տասնորդական թիւերու բաժանումը. — (1—6). Տասնորդական թիւերու բաժանումը կատարած ատեն նկատի առնելու է քանի մը պարագաներ . 1. Կրնայ ըլլալ որ միակ բաժանելին տասնորդական կ'ունենայ՝ իսկ բաժանարարը չ'ունենար . 2. Կրնայ ըլլալ որ բաժանարարը

ունենայ, իսկ բաժանելին չունենայ . 3. Երբեմն երկուքն ալ կ'ունենան : Եւ այս զանազան պարագաներուն համեմատ պէտք է վարուել, ինչպէս կը ցուցնէ կանոնը : Տասնորդական թիւերու փորձը ճիշտ ամբողջ թիւերու փորձին պէս է :

Վարձուքիւններ. — 86. Արտ մը 3 հէքթար մակերևոյթ ունի եւ բաժնուած է 6 կորիներու (ածու). գտէք թէ ամէն մէկ կորին քանի քառ. մէդըը մակերևոյթ ունի : — 87. Պարտէզ մը, որ 247 քառ. մէդըը մակերևոյթ ունի, ծախուեցաւ մէկ արը 1350 զրշ.ի . ինչ է պարտէզին գինը : — 88. Ճամբորդ մը 3 ժամէն 12 հազարամէկը տեղ քալեց. ըսէք թէ այս ճամբորդը մէկ ժամուան մէջ քանի հազարամէկը, քանի տասնամէկը քալեց : — 89. 7,86 երկայնութեամբ կտոր մը կերպաս գնեցինք 5,75 զրշ.ի . մէկ մէդըը քանի՛ կեաւ :

20. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ՈՒԹԵՐՈՐԿ ԵՄՍՈՒԱՆ (4—18)

Մեդրական դրութիւն. երկայնութեան չափերը. — 9—15. Երկայնութիւնները չափելու համար ամէնէն շատ գործածուող միութիւնն է մէդըը : Մէդըը երկրի շրջապատին մէկ քառասուն միլիոներորդ մասն է :

Մէդըին բազմապատիկներն են սասնակեղը (Տ.), հարիւրակեղը (Հ.), հազարակեղը (Հր.) և բիւրակեղը (Բ.) : Մէդըին ստորաբաժանումներն են, սասնորդակեղը (ս.), հարիւրորդակեղը (հր.) և հազարորդակեղը (հր.) :

Երկայնութեան չափերը իրարմէ 10ական անգամ մեծ են :

Երկայնութեան չափերը պէտք է գրել ու կարդալ ճիշդ տասնորդականներու պէս :

Մակերեւոյթի չափեր. — 16—26. Մակերեւոյթները չափելու համար կը գործածուի քառակուսի մէդըը :

Քառ. մէդըին բազմապատիկներն են. քառ. սասնակեղը (ս-Տ.), քառ. հարիւրակեղը (ս-Հ.), քառ. հազարակեղը (ս-Հր.) և քառ. բիւրակեղը (ս-Բ.) :

Իսկ ստորաբաժանումներն են. քառ. սասնորդակեղը (ս-ս.), քառ. հարիւրորդակեղը (ս-հր.) և քառ. հազարորդակեղը (ս-հր.) :

Քառ. մէդրին բազմապատիկներն ու ստորաբաժանումները իրարմէ՛ 100ական անգամ մեծ կամ փոքր են: Մակերեւոյթի չափերը ցուցնող թիւերու մէջ, չափերու ամէն մէկ միութիւնը երկու թուանշանով կը ցուցուի:


Երկրագործական չափերն են հեքթար, ար և ասնդիար:

Վարձուքիւններ. — **90.** Գործուոր մը տան մը տանիքը պիտի ծածկէ կղմխտրով, մէկ ժամուան մէջ հազիւ 90 տասնորդամէդր տեղ կըրնայ զոցել. կրննք ըսել թէ քանի՞ օրէն կրնայ այս գործն աւարտել ե՞նծ օրը 8 ժամ աշխատի եւ տանիքը 36 քառ. մէդր մակերեւոյթ ունենայ: — **91.** Երկու կտոր հողիբու արժէքն է 1560 դրուշ, անոնք մէկ քառ. մէդրը 2,5 դր. կ'արժէ. կրննք երկրորդ հողին մակերեւոյթը գտնել, ե՞ծէ ըսեմ որ առաջինին տարածուածիւնն է 560 քառ. մէդր: — **92.** Հող մը որ 45լ. եւ 25հրէ. մակերեւոյթ ունի, գնուեցաւ 24,450 դրշ.ի. հիմա քառ. մէդրը քանի՞ ծախելու է. ամէն մէկ կախին 9 դրշ. վաստկելու համար: — **93.** Առուոյտի արտ մը ցանելու համար 90 դրշ. ծախք եղաւ. առուոյտին սերմը կ'արժէ օխան 3 դրշ. և ամէն մէկ հէքթարին 22,5 օխա սերմ գնաց. կրննք ըսել թէ արտը քանի՞ հէքթար կամ քանի՞ ար տարածուածիւն ունի եւ քանի՞ օխա սերմ կրնայ առնել: — **94.** Երկրագործ մը երկու արտ ունի, որոշեց ամէնուն մէջ ալ ցորեն ցանել. արդ մէկ տէօնիւմին 0,5 բիլէ (երկու կոտ) սերմ կը ցանէ սովորաբար. մէկ բիլէ սերմը կ'արժէ 11,5 դրշ. եւ երկրագործը 586 դրշ.ի սերմ գնեց. կրննք ըսել թէ իր հողերու ամբողջ տարածուածիւնը քանի՞ տէօնիւմ էր: — **95.** Հողատէր մը 34լ. 40լ. հող ունի որ կ'արժէ 12,500 դրշ., կ'ուզէ ծախել այս հողը, այնպէս որ 1,100 դրշ. շահի. մէկ հէքթարը քանի՞ ծախելու է: — **96.** Հող մը գնեցի 34լ. 9լ. 12հրէ. մեծուծեամբ, մէկ կալը 42,5 դրշ.էն. ե՞ծէ 7500 դրշ.ը տամ, զեռ հինջ կը մնայ պարտքս: — **97.** Տունկ մը կ'ամէի օրը 3 հազարորդամէդր. քանի՞ օրէն 12 հարիւրորդամէդր կ'ամի: — **98.** 12 հասշապիկ շինելու համար 30 մէդր կտաւ գնաց, մէդրը 3,5 դրշ.էն. մէկ շապիկը քանի՞ դրշ.ի եկաւ: — **99.** Գիւղայի մը 5 ոչխար բերաւ քաղաք եւ հասրը 67,5 դրշ.ի հաշուով տուաւ խանութպանի մը, փոխարէնը առաւ 82,5 արշըն կտաւ. կտաւի արշընը քանի՞ եկաւ: — **100.** Վերարկու մը շինել տուի՛ 365 դրշ.ի. զերձակին վճարեցի 120 դրշ. կարողէ՛ք, 45 դրշ. այլեւայլ ծախք. կրննք ըսել թէ կտորին արշընը քանի՞ գնեցի, ե. թէ 3,25 արշըն գնաց վերարկուին համար:

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1. ԳՈՒՍ. — ՏՈՒՆԿԸ

1. Տունկի մը գտնազան մասերը. — 1. Եթէ հողին մէջէն տուռնկ մը քաշէք դուրս հանէք, ինչպէս կը ցուցնէ սա 69 թիւ Պատկերը, անոր վրայ որոշ կերպով պիտի տեսնէք շատ մը մասեր: Նախ կը տեսնէք կանաչ մասերը որ տունկին ծայրերէն կախուած են, ասոնք տունկին տեսնելու են: Սա երկար ու կոոր մասերը, որոնց ծայրերէն կախուած են տերեւները, տունկին ճիւղերն են:



Իսկ հողին մէջ բարակ ճիւղերու եւ մազերու պէս բաներ մը կը տեսնուին, ասոնք ալ տունկին արմատներն են:

Պատկ. 69. — Տունկ մը որուն տեսնուցնող (S), բուռը (B), ճիւղերը (Ճ), արմատները (Ա) եւ ծաղիկները (Մ) կ'երեւան:

2. Տունկի ճիւղերուն ծայրերը կ'երեւին ծաղիկներ: Ամէն մէկ ծաղիկը թէ՛ կանանչ թէ՛ դոյնդոյն մանրիկ տերեւներ ունի:

1. — 1. Ի՞նչ է տունկի մը տերեւը, բուռը, ճիւղը եւ արմատը: 2. Ծաղիկ մը ի՞նչեր կ'ուներայ:

2. ԴԱՍ. — ԶԱՆԱԶԱՆ ԲՈՅՍԵՐ

2. Մարգագեսիններու բոյսեր.



— Գարնան ժամանակ, մարգագեստիններու մէջ, ձեռմէ ո՞վ է տեսած շատ մը բոյսեր որ գոյնգոյն ծաղիկներ ունին: Քաղեցէ՛ք, և այդ ծաղիկներէն փունջ մը կապեցէ՛ք, պիտի տեսնէք թէ այդ դանազան բոյսերը ո՞րչափ իրարմէ տարբեր ձեւեր ունին: (Պատկ. 70):

Տեսէ՛ք սա մարգարսածաղիկը որ բուրշի ձեւով ծաղիկ մը ունի՝ ձերմակ պզտիկ տերեւներով և մէջտեղը դեղնագոյն պզտիկ գաւազաններ, նաեւ սա կրակոխները (հրանունկ, տիւրլուն չիչէյի) որ բաց ոսկեգոյն տերեւներ ունին: Հապա ի՛նչ սիրուն են առուոյտի արտերէն քաղուած նարնջաձեւ ծաղիկները որ կարմիր

Պատկ. 70. — Մարգագեսնի բոյսերէ փունջ մը: Հրանունկ (Հ), Մարգարսածաղիկ (Մ), Քոսաբոյս (Ք), Սիգաբոյս (Ս):

արտերէն քաղուած նարնջաձեւ ծաղիկները որ կարմիր


վարդի գոյն ունին և երեխնակի ծաղիկ կ'ըսուին: Կան, դարձեալ, քոսաբոյսերը (Ք) որոնք երկնագոյն ծաղիկներ ունին, և սիգաբոյսերը (Ս) որ բաց կանաչ ծաղիկներ ունին և խոտ կամ դալարիք կ'ըսուին:

2. — Քանի մը օրինակներով բացատրեցէ՛ք թէ ի՞նչ գտնուած ձեւեր կ'ունենան մարգագեսնի եւ դաւի ծաղիկները: Ի՞նչ կ'ըսուին խոսաբոյսերը:



3. ԴԱՍ. — ԶԱՆԱԶԱՆ ԲՈՅՍԵՐ (Շար.)

3. Ծաղիկ ունեցող եւ չունեցող տեսակեր. — 1. Այն բոլոր տեսակները որոնց վրայ խօսեցանք մինչև հիմա, ամէնքն ալ թէ՛ ծաղիկ ունին, թէ՛ սերմ, ասոնց կ'ըս-



Պատկ. 71—74. — Ծաղիկ ունեցող բոյսի մը անուր: Լուրիայից կրած ձեւափոխումներ: 1. Սերմնահատիկ. 2. Երջղ հուճկը. 3. Նուկրած ձեւափոխումներ: 4. Խոտորցած տունկի մը գագաթը, ծաղիկներն ու պտուղները:

ուր ծաղիկ ունեցող տունկեր: Բայց շատ մը բոյսեր ալ կան, ինչպէս սունկերը, պտերները որ բնաւ ոչ ծաղիկ, և ոչ սերմ կուտան, ասոնց կ'ըսուի ծաղիկ չունեցող տունկեր:

2. Երբ ծաղիկներու ժամանակը կ'անցնի և անոնք վար կը թափին, անոնց ներքը սերմեր առաջ կուգան և կը մեծնան. այս սերմերը հատիկներ են:

Օրինակի համար լուբիայի հատիկ մը երբ հողին մէջ կ'իջնայ, կը սկսի կամաց կամաց աճիլ և առաջ կը բերէ արմատներ, ճիւղեր, տերեւներ, յետոյ ծաղիկներ, որ վար կը թափին և կը թողուն սերմեր կամ հատիկներ: (Պատկ. 71—74):


3. — 1. Բոյսերուն երկու մեծ խումբեր որո՞նք են: 2. Ծաղիկ ունեցող բոյս մը, օրինակ լուբիան, ի՞նչպէս կը զարգանայ:

4. ԴԱՍ. — ԲԱՆՉԱՐԱՆՈՅԻ ԲՈՅՍԵՐ

1. Բանջարեղէններ. — Բոյսեր կան որ ամէն օր կը գործածենք խոհանոցին մէջ: Ասոնք տանը քով պղտիկ պարտէզներու մէջ կը մշակուին, այդ պղտիկ հողին բանջարանոց կ'ըսուի: (Պատկ. 75):

Բանջարեղէններէն շատերուն արմատը կ'ուտուի, ինչպէս սեպոյիկը, շոգանը: Շատերուն տերեւները եփելով կ'ուտենք, ինչպէս կաղաւթը: Շատերուն ալ առանց եփելու, ինչպէս եղետի (բատիքեա), հազար (մաբուլ) ըսուած բանջարեղէնները որոնցմէ աղցան (սալաթա) կը շինուի:

Կան ուրիշ բանջարեղէններ ալ որոնց հատիկները կ'ուտուին, ինչպէս ջրբխա, սխտեռ, ոսպ, մաշ: Այս հատիկները պատուական ուտելիքներ կ'ըլլան:



Պատկ. 75. — Բանջարանոցին մէջ կը մշակուին՝ այն բոյսեր որ կ'եփուին ու կ'ուտուին:

4. — Բանջարանոցին մէջ ի՞նչ բոյսեր կը մշակուին: Ո՞ր բոյսեր կը մշակուին իրենց արմատին համար, սերելի՞ն համար, հունսին կամ սերմնահասիկին համար:

5. ԴԱՍ. — ՑՈՐԵՆԸ ԵՒ ԳԵՏՆԱԽՆԶՈՐԸ

5. Ցորենը. — 1. Ցորենը մարդու սնունդին համար ամէնէն կարեւոր հացաբոյսն է:

Ցորենը կը ցանուի կամ աշնան վերջերը կամ գարնան սկիզբները: Գարնան, ցորենը կ'աճի, ամառ ատեն կը հասուննայ, հասկեր կը կապէ (Պատկ. 76): Ամառ ատեն հասկերը կը դեղնին, ցորենի հատիկները եղած են, կը հնձեն զանոնք և կը ժողվեն շտեմարաններու մէջ:

2. Յորենի հասկերը կային մէջ կը ծե-
 ծեն, յարգը կը զատուի հատիկներէն :
 Յարգը կենդանիներուն կուտան ուտելու ,
 իսկ ցորենը ջրաղացին մէջ կ'աղան եւ ա-
 լիւր կը պատրաստեն : Ալիւրը բարակ մա-
 ղով կը մաղեն , թեփը կ'ելլէ . ա՛ն ալ նո-
 ըն կենդանիներուն ու թռչուններուն
 կուտան , իս'կ բարակ ալիւրէն հաց կը
 պատրաստեն :



Պատկ. 77
 Գեսնախնձորի տունկ :

6. Գեսնախնձոր.
 Գեսնախնձորն ալ շատ
 կարեւոր տունկ մ' է
 և սնունդի մէջ մեծ
 տեղ կը բռնէ : Գես-
 նախնձորը հողին մէջ
 կ'աճի և մէկ սերմէն
 շատ մը արմատներ ա-
 ուսջ կուգան (Պատկ .
 77) : Աշնան ժամանակ
 այս արմատները հո-
 ղին տակէն կը հանեն
 և չոր ու մութ տեղ
 մը կը դրոյն :



Պատկ. 76
 Յորենի ծաղ-
 կած հասկ մը :

5. — 1. Ի՞նչպէս կը բուսնի ցորենը : 2. Յորենի հասկներն
 ի՞նչ ընելով՝ թեփն ու ցորենը կը զատեն : — **6.** Գեսնախնձորն ի՞նչ-
 պէս կ'աճի : Ո՛ր կ'աճի (հողէն դուրս թէ հողին մէջ) :



6. ԴԱՍ — ԾԱՌԵՐ

7. Ծառեր. — Ծառերը մեզի օգտակար են : Փայ-
 տահասններն անտառներու մէջ տարին հազարաւոր ծա-
 ուեր կը կտրեն : Այս ծառերուն մեծ ճիւղերէն գերաններ
 կը պատրաստեն , իսկ սղաթիկներէն վառելու փայտ ու
 փայտածուխ :

Իսկ հաստ ծառերու բունները մեծ սղոյններով բա-
 րակ բարակ կը կտրտեն և կը շինեն տախտակներ :
 (Պատկ . 78) :



Պատկ. 78. — Ծառի հաստ կոնդեբէն գերան կը կտրեն
 գործաւորներ :

8. Փայտի գործածութիւնը. — Գերաններով ու տախ-
 տակներով կը շինեն անազին տուններ : Գերանները սիւ-
 ներու պէս տանը պատերը և անկիւնները կը բռնեն ,
 իսկ տախտակները անոնց վրայ կը դառնուին : Գեռ ու-
 ըիչ անհամար կան կարասիներ կը շինեն փայտերով ու

տախտակներով: Ատաղձագործներն ու կահագործները շարունակ տախտակէ բաներ կը շինեն. տուն, սեղան, սնտուկ, եւ այլն:

7. — Ծառերն ի՞նչ օգուտ ունին: — Տ. Ո՛ր գործաւորներ փայտի պէտք ունին:

7. ԴԱՍ. — ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՑՍԵՐ ԹՈՒՆԱՒՈՐ ՏՈՒՆԿԵՐ

9. Բժշկական բոյսեր. — Բոյսեր կան որ բժշկութեան մէջ կը գործածուին իբրեւ դեղ. ասոնց կ'ըսուի բժշկական բոյսեր:



Պատկ. 79

Մոլոս կամ բարգըռուկ

ժողովելով կը խաշեն եւ ջուրը կը լամեն, երբ ստամոքսը ցաւի:

10. Թունաւոր բոյսեր. — Տունկեր կան որ, եթէ մարդ բերանը դնէ, կը թունաւորուի, կամ՝ եթէ կենդանիները արածելու ժամանակ ուտեն զանոնք՝ կը թունաւորուին: Ասոնց կ'ըսուի թունաւոր բոյսեր:

Ուրեմն, երբ բոյս մը չէ՞ք ճանչնար, բնաւ մի՛ ուտէ՞ք

Այս տունկերը կը ժողվեն, կը չորցնեն, յետոյ կը խաշեն՝ ջուրը խմելու համար, սկամ կը փշրեն՝ փոշին գործածելու համար, կամ ուրիշ կերպով մը անոնց հիւթը կը քամեն, կ'առնեն՝ հիւանդութեան մէջ գործածելու համար:

Օրինակ առնենք կանաչ երկար տերեւներով անանուխը, կամ վարդագոյն տերեւով մուշը (Պատկեր 79), որ ամէն տեղ ճամբաներու եղերքները եւ մարգագետիններու քովերը կը բուսնի,



Պատկ. 80

Մխախտ

անոր պտուղը կամ տերեւները: Օրինակի համար, կեռասի պէտք կարմիր սեւորակ պտուղ մը կայ, որ անտառներու մէջ կը բուսնի, եւ շիխասակ (կամ շանդուլիկ) կ'ըսուի. ասիկա սարսափելի թոյն է: Նոյնպէս մոլեխիկը (պալտորան): Ծխախտը թոյն կը պարունակէ, (Պատկ. 80), որուն նիխորին կ'ըսուի: Իրաւ է որ ծխախտի տերեւները կը չորցնեն, կը մանրեն՝ ծխելու համար, բայց, երբ շատ ծխեն, կը թունաւորուին:

9. — Ի՞նչ է բժշկական բոյսը: Օրկնակներ տուէ՛ք: — 10. Ի՞նչ է թունաւոր բոյսը: Օրինակ:

8. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ՈՒԹԵՐՈՐԳ ԱՄՍՈՒԱՆ (1—10)

Բոյսի մը զանազան մասեր. (1) — Բոյսի մը վրայ յայտնի կ'երեւան տերեւներ, ճիւղեր, արմատներ, եւ ճիւղերուն ծայրերը՝ ծաղիկներ: Ծաղիկները պզտիկ, կանաչ եւ գունաւոր տերեւներ ունին: Ծաղիկները յետոյ կը ծափին եւ իրենց տեղ պտուղներ կամ հատիկներ առաջ կուգան:

Զանազան բոյսեր. (2—3). — Բոյսերը կրնանք երկու խումբի բաժնել, անոնք որ ծաղիկ ունին, (ինչպէս մարգարտածաղիկ, կրակուկ, առուոյտ) եւ կ'ըսուին ծաղիկ ունեցող բոյսեր եւ անոնք որ ոչ ծաղիկ, ոչ պտուղ ունին, եւ կ'ըսուին ծաղիկ չունեցող բոյսեր:

Սննդարար բոյսեր. (4—6). — Շատ մը բոյսեր բանջարանոցներու մէջ կը մշակուին իրենց տերեւներուն (հազար, կաղամբ), արմատներուն (ստեպլին, շոգամ), հատիկներուն (լուբիա, սիսեռ, մաշ) համար, որոնք ընտիր ուտելիքներ են: Անոնց մէջ մոռնալու չէ՛ գետնախնձորը, որուն արմատները այնքան սննդարար են, Յորենը կ'աղան եւ ալիւրէն հաց կը պատրաստեն:

Ծառեր. (7—8). — Ծառերը ոչ միայն վառելու փայտ կուտան, այլ անոնցմէ կը պատրաստեն գերաններ ու տախտակներ, որոնցմով տուններ եւ կահեր կը շինեն:

Բժշկական եւ թունաւոր բոյսեր. (9—10). — Բժշկական բոյսեր անոնք են որ իբրեւ դեղ կը գործածուին (անանուխ, տուզո) եւ այլն: Բոյսեր ալ կան որ թոյն կը պարունակեն, ասոնց կ'ըսուի թունաւոր բոյսեր:

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Զ Ո Ւ

1. ԴԱՍ. — ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ

1. Բայն ու բային սերը. — Մենք դիտենք թէ այն բառը որ բան մը ընել կամ ըլլալ կը ցուցնէ, բայ է: Իսկ այն բառը որ նոյն գործը ընող կամ կրող անձը կը ցուցնէ, Տերբայի կամ եկրակայ կ'ըսուի:

2. Բայը եկրակային համաձայն. — Եթէ Տէրբային Եղակի է, բայն ալ Եղակի կը դրուի, եթէ Յոքնակի է, բայն ալ անոր համաձայն Յոքնակի կը դրուի:

3. Բայը եկրակային եւս դէմով ալ կը համաձայնի.

— Ա. Դէմքով Տէրբային կ'առնէ Ա. դէմքով բայ:

Բ. » » » Բ. » »

Գ. » » » Գ. » »

Չենք կրնար ըսել՝ ես կարդաց,

» » » ես կարդացիմ:

Պէտք է ըսել ես կարդացի: Քանի որ ես Դերանունը Եղակի Ա. Դէմք է, կարդացի բայն ալ Եղակի Ա. Դէմք կը դնեն:

1. Հետեւեալ Տէրբայիներուն յարմար բայերն ընտրեցէք.

Տերբայի. — Ես, դուն, ան մենք, դուք, անոնք:

Բայ. — Կը գրեմ, խօսեցանք, մարեց, պիտի ուտեն, կը փորեա, կը խաղար: — Վառեցի, գատեց, փոխեցին, լուսցինք, խմեց, երգեցիր, շարեցիր:

2. Նոյն Բայերն ու Տէրբայիները նուէն գրեցէք, Սեռի խնդիր մը աւելցնելով:

3. Գտէք սա կենդանիներուն ձայնը (Գ. Վարժ. էջ 50, Հրճ. 47):

- 1. — Դառնը ... (Ի՞նչ կ'ընէ), — 2. Կովը ... : — 3. Ձին ... :
- 4. Էշը ... : — 5. Ծուռը ... : — 6. Կատուն ... : — 7. Գորտը ... :
- 8. Սոխակը ... : — 9. Ճնճողը ... : — 10. Գայլը ... : — 11. Առիւծը ... : — 12. Օձը ... կամ ... : — 13. Ճանճը ... : — 14. Լակոտը ... : — 15. Մարդը ... :

2. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Ի՞նչ է բայը: Ի՞նչ է Տէրբային կամ եկրական: — 2. Բայը ո՞ր բառին հետ կը համաձայնի քի ով: — 3. Բայը ի՞նչ կերպով համաձայնելու է եկրակային. — օրինակ:

4. Օրինակեցէ՛ք՝ շեղագիր քառերը Յոգնակիի փոխելով.

Կասուն անտառաօրիմ կենդանի է. իր վարքը կեղծ է. իր բնութիւնը չար է: Գլուանք կը պիտի, եւ շատ անգամ իր տիրոջ ծանկին վրայ կը նստի Կատուին ձագը գուարթ, աշխոյժ, սիրուն է եւ ազարը կը զուարճացնէ, միայն թէ ասոնք զոռչանալու են անոր ճակիի հարուածէն. այս կեղծաւոր ու բնող կենդանիին խաղը, թէեւ հոսեցի է բայց երբեք աննեղ չէ, միշտ չար նպատակ մ'առնի:

5. Օրինակին պէս գրեցէ՛ք յաջորդ բառերը.

Օրինակ. — Գաղղիա — Գաղղիացի, գաղղիերէն, գաղղիական:

Անգղիա, Պելճիբա, Զուխցեբիա, Թուրքիա, Բրուսիա, Սպանիա, Աւստրիա, Ռուսիա, Դանիա, Շուեռ, Հոլանտա, Իտալիա, Նորվեկիա, Չին, Ճաբոն, Գերմանիա, Ֆրանսա:

Ծան. — Գաղղիա կամ Ֆրանսա կը կուռի Եւրոպայի երկիրներէն մէկը: Գաղղիացի կամ ֆրանսացի կ'ըսուի նոյն երկրի ժողովուրդը: Գաղղիերէն կամ ֆրանսերէն կը կուռի նոյն ժողովուրդին լեզուն: Գաղղիական կամ ֆրանսական կ'ըսուի ինչ որ Գաղղիացի կամ Ֆրանսացի կը վերաբերի:

(Վերի ծանօթութեան համեմատ կրկնեցէ՛ք միւս անուններուն համար ալ):

6. Ածականները Գոյական ըրէք, Գոյականներն ալ Ածական:

Կապոյտ երկիր, խաղող ծով, Բարբեր հող, Հարուստ երկիր, Փայլուն րոյ, Սրային ցրտութիւն, Ստաւոր կենդանի, Յեղային աստիճան, Ծնողական սէր, Ընկերական աշակցութիւն, Պարկեշտ մարդ, Մանկական զուարթութիւն, Ճիւղային վրէժխնդրութիւն, Խոր զեա, Կանոնական կազմութիւն, Երշտակի ընտանիք, Անոց բնութիւն, Բնական սրտակեր, Հեշտալի ժամանակ:

7. Գրեցէ՛ք Լուսաւորիչ Ա. Գրկագրի յաջորդներուն անունները:

8. Գրեցէ՛ք եկեղեցիներու եւ վանքերու անուններ՝ նշելով ա՞նոնց տեղը:

3. ԳԱՍ. — ՆԱԼ, ՆԻԼ, ՆԱԼ ՎԵՐՋԱՒՈՐՈՂ ԲԱՅԵՐ

4. ԱՆԵՐԵՆՈՅՐ ԵՆԻ, ԵՆԻ, ԵՆԻ ՎԵՐՋԱՆՈՐՈՅ ԲԱՅԵՐ ԿԱՆ ՈՐ ԱՐԱՆՍԱԿԻԱՆ ԺԱՆԱՆԱԿՆԵՐՈՆ ԱՔՉ ԱՐԿԱՐ ձԵՆԵՐԷՆ ՍԱՐՔԵՐ ԿԵՐԱՊՈՎ ԿՐ ԽՈՆԱՐԻՆ:

Բայերուն իրար ձեւերը սորվեցանք (Գ. Պրակ, Դաս 2, 4, 6, 8, 9) և Գ. Պրակ, Դաս 1, 2, 3, 4):

5. Բային արմատական ժամանակներն են կատարեալ, Հրամայական և Անցեալ Դերբայ:

6. Ահաւաստիկ տարբերութիւնը. Օրինակ՝ Գտնել բայը. կատարեալ՝ Գտայ, զսար, զսաւ, զսակ, զսաք, զսակ: Հրամայական՝ Գտի՛ր, զտնե՛կ, զտնե՛ք:

Անցեալ Դերբայ՝ Գտած:

7. Տիրար ձեւերէն տարբեր կը խոնարհին.

Ա. Լծորդութեան 5 բայ. — Գտնել, մտնել, ելլել (եղնել), իջնել, հեծնել:

Բ. Լծորդութեան. — Հասնիլ, բռնիլ, մտնիլ, անցնիլ, հազնիլ, հասնիլ, ծնիլ, սնիլ:

Նաեւ սխիլ, փրփիլ, պրծիլ, նստիլ, որոնց Հրամայանք ԿՐԱԲԱՅ ԱԽԵ՛, փրփե՛, եւ այլն:

Գ. Լծորդութեան. — Գիրևայ, յոզնայ, գիտնայ, մեծնայ, սեւնայ, գոյնայ, մոռնայ և ուրիշ շատեր, որոնց ցանկը պիտի տեսնենք յաջորդ 67 երեսին մէջ:

9. Դէմ առ դէմ խոնարհեցէ սա բայերը.

Ա. Լծորդութեան 1. Ներել 2. Մտնել:

Բ. » 1. Գտնիլ 2. Հատնիլ:

Գ. » 1. Երբեալ 2. Մոռնայ:

10. Հարցումներուն պատասխանեցէ: (Գ. Վրժ. էջ 51, Հրճ. 48):

1. Զորպետ կ'ըսուի ... (նվ): — 2. Գնդապետ կ'ըսուի ... (նվ): — 3. Հազարապետ կ'ըսուի ... (նվ): — 4. Հարիւրապետ կ'ըսուի ... (նվ): — 5. Զորախումբ կ'ըսուի ... (ինչ): — 6. Հրամանատար կ'ըսուի ... (նվ):

11. Որոշեցէ՛ կեցողանիներ, բոյսեր, հանքեր:

Վառեկ, կրտեմ, լեղակ, սոպ, Թրձուր, կատու, մեխակ, աղուէս, առուոյտ, խղունչ, գամ, ազատքեղ, կուզ, լոլիկ, աղ, խնչախառ, պղպեղ, արծիճ, արջիւր, երկրմայր, ծարիր, ժայռ, ծովագին, կիր, ազամանդ:

12. Գրով ու բերնուց պատասխանեցէ:

1. Ի՞նչ կ'ըսուի այն անունը որուն նշանակած բանը (շնչաւոր էակ կամ անշունչ առարկայ) կրնանք տեսնել, կամ կրնանք շօշափել: — 2. Ի՞նչ կ'ըսուի այն անունը որուն նշանակած գաղափարը մտքով միայն կ'ըմբռնենք: 3. — Ի՞նչ կ'ըսուի այն անունը որ տեսակի մը մէջ միայն մէկ անձի կամ առարկայի կրնայ պատշաճիլ: — 4. Ի՞նչ կ'ըսուի այն անունը որ միեւնոյն տեսակէ ամէն առարկաներու կրնայ տրուիլ: 5. — Ի՞նչ թիւ է այն անունը որ միայն մէկ առարկայ կը ցուցնէ: 6. — Ի՞նչ ըսել է Յոքնակի:

13. Հարցումներուն պատասխանեցէ: (Գ. Վարժ. էջ 51. Հրճ. 48, Ծափօրութիւն):

1. Ի՞նչ է դասակ կամ զումարտակ:

2. » է վաշտ:

3. » է գունդ:

4. » բանակ:

1. Ի՞նչ կը կոչուի դասակին պետը: — 2. Վաշտին պետը: — 3. Գունդին պետը: — 4. Բանակին պետը:

14. Դէմ առ դէմ գրեցէ՛ Անուոց ամականներն ու Անուոց դեմոններն:

15. Սա անուններուն բով մէյնէկ յասկացուցիլ դրէ՛:

1. ... գաւազանը: — 2. ... ծեփը: — 3. ... գոյնը: — 4. ... էջը: — 5. ... պտուղը: — 6. ... կոնակը: — 7. ... բիթը: — 8. ... եղունգը: — 9. ... խոյրը: — 10. ... ամանը: — 11. ... թեւը: — 12. ... մագիլները:

4. Ի՞նչ գիտէ՛ք նեղ, նիղ, նաղ վերջացող բայերուն վրայ: — 5. Որո՞նք են բային Արմատական ժամանակներ: Որո՞նք են երեք Լծորդութեանց բայերուն իրար ձեւերը: — 6. Նեղ, նիղ, նաղ յանգող բայերուն՝ իրար ձեւերէն տարբերութիւնը ո՞րն է: — 7. Ո՞ր բայեր այս տարբերութիւնը ունին:

5. ԴԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Ա Ղ Օ Ք Ք

Ո՛վ մե ե Հայրը, որ երկնի մեջ ես,
 Թո՛ղ սուրբ ըլլայ
 Քու վե՛ն անունը յաւերժայեա երկրի վրայ.
 Եւ քու արեւայութեանը փառսով
 Յոյց սուր նամբան ապահով,
 Ու մեզ մօտեցուր անանց աշխարհին
 Ծըճելու շողը երկնային:

Ո՛վ մե ե Հայրը, որ երկնի մեջ ես,
 Թո՛ղ միտք ըլլայ
 Քու սուրբ կամբը նամարտայեա երկրի վրայ
 Եւ քու բարութեամբը առաջաւորի
 Հա՛ց սուր խեղճին ամեն օր
 Ու մեզ մօտեցուր անմահ սեղանիդ
 Իբր հրաւիրեալներ աներկմիտք:

Ո՛վ մե ե Հայրը, դո՛ւն մե պարտին նոր,
 Ծնուի՛նք միտք դուր,
 Ինչպէս մենք ալ ուրիշներուն պարտինք բոլորուր
 Եւ քու արդարութեանը շնորհիւ
 Տո՛ւր մեզ սե ու սիտ ազնիւ,
 Եւ մեզ մօտեցուր այն ուղիդ նամբուն
 Զոր ցոյց կուտաս ամենուն:

Ե. ԵՊ. ԴՈՒՐՆԱՆ

1 Հոկտ. 1901, Արմաւ

16. Նոյն ռամատորին մէջէն գտէ՛ք Ռուսական ամականներն ու Գերանունները: Նաեւ օրինակեցէ՛ք այն բառերը զորոնք չէ՛ք հասկնար:


17. Նոյն ռամատորն արձակի վերածեցէ՛ք եզակի բոլով, այսպէս. — Ո՛վ ի՛ն Հայրս, որ երկինքն ես, եւայլն:

18. Կէտերուն տեղ դրէ՛ք յարմար բառերը. (Գ. Վրժ. էջ 52, շր. 49):

1. ... կ'ըսուի այն մարդը որ գէնք կը կրէ: — 2. ... կ'ըսուի այն զօրականը որ 10 զինուորի կը հրամայէ: — 3. ... կ'ըսուի այն զօրականը որ 100 զինուորի կը հրամայէ: — 4. ... կ'ըսուի այն զօրականը որ զինուորական շարժումներու կը հսկէ: — 5. ... կ'ըսուի այն զօրականը որ սպայի մը կ'օգնէ: — 6. ... կ'ըսուի այն զօրականը որ 1000 զինուորի կը հրամայէ: — 7. ... կ'ըսուի այն զօրականը որ բանակի մը կը հրամայէ: — 8. ... կ'ըսուի այն զօրականը որ շատ մը բանակներու կը հրամայէ: — 9. ... կ'ըսուի այն զինուորը որ ոտքով կը քալէ: — 10. ... կամ ... կ'ըսուի այն զինուորը որ ձիով կը կռուի: — 11. ... կ'ըսուի այն զինուորը որ բանակին պօշը կը կրէ: — 12. ... կ'ըսուի այն զործիրը որով ուսմբ կ'արձակուի: — 13. ... կ'ըսուի այն զինուորը որ Յնդանսօ կ'արձակէ: — 14. ... կ'ըսուի այն սպաներուն խումբը որ զինուորական զործողութեանց յատկագիրը կը շինէ:

19. Սա բայերէն ծագող Գոյականները գտէ՛ք (Գ. Վարժ. էջ 53, Հրահ. 50):

Քարանալ, ծառանալ, հնչել, սուլել, սկսել, պատուել, սառել, զրկել, վախնալ, փախչիլ, կասկածիլ, արգիլել, յորդել, զրգռել, պարգել, երկնջիլ:



6. ԴԱՍ. — ԲԱՅԵՐՈՒՆ ՎՐՁՅ ԳԻՏԵԼԻԲ

Տ. Ա. ԳԻՏԵԼԻԲ. — Առնել, խածնել, քֆնել, պագնել բայերուն Արևատական Ժամանակները սապէս կ'ըլլան.

Կատարեալ, Առի, առիտ, առաւ, առիւնք, առիք, առիւն:

Հրամայական. Ա՛ռ, առնէ՛նք, առէ՛ք:

Անցեալ Դերբայ. Առած:

Գ. Բ. ԳԻՏԵԼԻԲ. — ԶԻՒՒ վերջաւորող բայեր. — Բ. Լծորդութեանէն չի վերջացող քանի մը բայեր ճիշտ ձևէն վերայ կ'երթան:

Ասոնք են՝ Փախչիլ, փոչիլ, դպչիլ, փակչիլ, բոչիլ:

10. Նեղ, ճիղ, նաղ և չիղ յանդող հետեւեալ բայերը տիպար ձևերուն պէս կը խոսնարչին.

Ա. ՆՆԼ վերջաւորողներ. — Քննել, զննել, շինել, ժանտնել, յանդիտնել, հիմնել, կաննել, օրննել, օգնել,

Նոր Դպրոց, Ը. Պր. Է

հանել, վանել, խառնել, քննել, մանել, մասնել, պաս-
նել, վասնել, զգեսնել, զանազանել, բաժնել, ապանել,
սարսղնել, խարսպանել, ձեկնել, ձանձնել, ցանցնել, սարս-
ձայնել, ձգնել, եւայլն որոնք կ'ըլլան սիրել ին պէս :

Բ. ՆԻԼ վերջաւորողներ. — Յոգնիկ, խոսուիսնիկ,
բանիկ, խպնիկ, ֆրսնիկ, կործանիկ, հառնիկ, հառանիկ,
դառանիկ, ընդունիկ, վարանիկ, սասանիկ, ծածանիկ, սա-
սանիկ, եւայլն. որոնք կ'ըլլան խօսիլ ին պէս :

Գ. ՉԻԼ վերջաւորողներ. — Կառչիկ, հանգչիկ, սկպչիկ,
խրսչիկ, քաֆչիկ, որոնք կ'ըլլան խօսիլ ին պէս :

Վ. ՆԱԷ վերջաւորողներ. Ոռնայ, մնայ, զնայ, սնայ-
նայ, ջանայ, որ կ'ըլլան կարդալ ին պէս :

- 20. Գէմ առ դէմ խոնարհեցէ՛ք Արմասական ժամանակները .
- 1. Առնել. 2. Խառնել.
- 1. Փարխել. 2. Կառչիլ.
- 1. Ոռնալ. 2. Քեռնալ.
- 1. Տնտնալ. 2. Աճչալ.

21. Կէտերուն տեղ դրէ՛ք յարմար բառերը. (Գ. Վարժ. էջ 58, Հրահ. 55) :

- 1. — Թմբուկը, շեփորը, դաշնակը, ջուժակը, ծնծղան, զանգակը, դափը, քնարը, տափղը, վիճը, սրինգը ... են : — 2. Տօ, ռե, մի, ֆա, սօլ, ռա, սի երաժշտական եօթը ... կամ ... են : — 3. Քանդակագործ-
ուժիւնը, երաժշտուժիւնը, նկարչուժիւնը, ճարտարապետուժիւնը ... են : — 4. ... ը անդրիներ, կոծողներ, արձաններ կը շինէ : — 5. Անձի մը կամ շենքի մը՝ բարէ, զածէ կամ արոյրէ պատկերը կ'ըսուի ... : — 6. Կէս մէջքէն շինուած անդրի մը կը կոչուի ... :

8. Ո՞րն է բայերուն վրայ Ա. Գիտելիքը : — 9. Բ. Գիտելիքը :
10. Նել, նիլ, նալ եւ չիլ յանգող ո՞ր բայեր Տիպար ձեւերուն վրայ կ'երթան :

7. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

22. Սա բայերուն արմասական ժամանակները գրեցէ՛ք .
Ա. Լծորդութիւն. — 1. Գտնել, մտնել, ելլել (էլենել), իշնել, հեծ-
նել, տեսնել (*): 2. Առնել, խառնել, թքնել, պագնել.

Բ. Լծորդութիւն. — 1. Հասնիլ, բուսնիլ, մեռնիլ, անցնիլ, հագ-
նիլ, հատնիլ, սնիլ, ծնիլ. 2. Սկսիլ, փթիլ, պրծիլ, նստիլ.

Գ. Լծորդութիւն. — Բարկանալ, ճանչնալ, զիտնալ, զորչնալ, վախ-
նալ, կենալ, աճչնալ, տարնալ, մտննալ, մերձենալ, հեռանալ, հասկնալ,
սեւնալ, երեւնալ, (երեւիլ, երեւալ), հրընտնալ, կապուտնալ, քնանալ,
զիրնալ, լոգնալ (լոգանիլ), մեծնալ, վերնալ, ցածնալ, խոստանալ, փառ-
նալ, բարանալ, շատնալ, քիչնալ, ստանալ, իմանալ, մոռնալ, կամենալ:
ուսննալ, գորմանալ, զոհանալ, երողւննալ, ուշանալ.

23. Հարցումներուն պատասխանեցէ՛ք. (Գ. Վրժ. էջ 59, Հր. 56):
1. Ի՞նչ կ'ընէ հովը: 2. Ի՞նչ կ'ընէ մայրը: 3. Ի՞նչ կ'ընէ օղջ: 4.
Ի՞նչ բրաւ Գառիթ մարգարէն: 5. Ի՞նչ կ'ընէ ծիծառնը, 6. Գինին ինչէ՛ն
կը շինուի: 7. Ի՞նչ է կաղամբը: 8. Ի՞նչ ըրաւ Ս. Մեսրոպ: 9. Ի՞նչ ըրաւ
Գազազ Արթին ամիրա: 10. Ի՞նչ ըրաւ Յամին Սուլթան Մէհմէտ, եւ ինչ
էղաւ Յովակիմ Եպիսկոպոսը.

24. Պատնալները դրուած են. հետեցուցէ՛ք արդիւնները. (Գ.
Վարժ. էջ 60, Հրահ. 57),

- 1. Անցուղորձը դիւրացնելու համար (Ինչ կ'ընեն): 2. Սեննակը օդին
ցրտուծնէն պոճելու համար (ինչ կ'ընեն): 3. Քրիստոնեաները եկեղեցի
հրաւիրելու համար (ինչ կ'ընեն): 4. Երաժիշտ քրիստոնեայ ընելու համար
(ինչ կ'ընեն): 5. Ոչխարին բուրդէն հագուստ շինելու համար (ինչ կ'ընեն):
6. Գրեւ-կարդալու եւ կրթուելու համար (ինչ կ'ընեն): 7. Ծաղիկները զօ-
վացնելու համար (ինչ կ'ընեն): 8. Աստուծոյ աղօթելու համար (ինչ կ'ընեն):

25. Հետեւեալ խօսքերուն մէջէն ջնջեցէ՛ք Մակբայները :
1. Երբեմն հօրս հետ պտոյտի կ'ելլեմ. — 2. Դեռ կերակուր չենք
կերած : — 3. Ո՛չ կը խօսիմ, ո՛չ ալ կը պատմուիմ. — 4. Հոս եկուք, հոն
մի երթար : — 5. Շատ յոյնացուցիք զիս : — 6. Ետքը կը տեսնուիք : —
7. Երբեք չեմ ներքեր քեզի սուտ փոսիլ : — 8. Առաջ պզտիկ էի, հիմա
մեծացայ : — 9. Ինչո՞ւ չես խօսիր : — 10. Վաղը կը գրեմ, այսօր ժամա-
նակ չուսնիմ:

(*) Հրամայականը կ'ըլլայ տե՛ս:

8. ԴԱՍ. — ԶԱՐՏՈՒՂԻ ԵՒ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

11. Զարտուղի են այն բայերը որոնց արմատական զրերը կամ վերջաւորութիւնները խոնարհումի առեն ո՛րեւէ փոփոխութիւն կը կրեն :

Զարտուղի են. — Բերել, դնել, գարնել, ընել, ըսել, սանիղ, շալ, սալ, բանալ, դառնալ, իյնալ :

12. Անկանոն են այն բայերը որոնց արմատը կատարեալի և Հրամայականի մէջ բոլորովին կը փոխուի :

Անկանոն են. — Ուտել, գալ, երթալ :

13. Զարտուղի և Անկանոն բայերը հետեւեալ կերպով կը խոնարհին :

Աճեցեալ	Կատարեալ	Հրամայական
Բերել	Բերի, բերիք, բերաւ, բերինք, բերիք, բերին	Կե՛ր, կերէ՛ք, ուտե՛նք
Դնել	Դրի, դրիք, դրաւ, եւն.	Դի՛ր, դնե՛նք, դրէ՛ք
Զարնել	Զարկի	Զա՛րկ
Ընել	Ըրի	Ըրէ՛
Ըսել	Ըսի	Ըսէ՛
Տանիլ	Տարի	Տա՛ր
Լալ	Լացի	Լա՛ց
Տալ	Տուի	Տո՛ւր
Բանալ	Բացի	Բա՛ց
Դառնալ (*)	Դարձայ	Դարձի՛ր
Իյնալ	Ինկայ	Ինկի՛ր

Ուտել	Կերայ	Կե՛ր
Գալ	Եկայ	Եկո՛ւր
Երթալ	Գացի	Գնա՛

(*) Եւ ասկէ կազմուող ուրիշ բայերուն ուն զրերը Իձի կը փոխուին :


26. Իբրեւ մէկ բայ խոնարհեցէք սա վեց բայերը. Բերել, դնել, գարնել, ուտել, գալ, երթալ :

27. Ըսէ՛ք ի՞նչ են. (Գ. Վարժ, էջ 62, Հրահ. 59) :

1. Գրիչը, տետրակը, մատիտը ... են:
2. Թռուցիկը, հողը, պուպ-րիկը ... են:
3. Խնձորը, տանձը, կաղիքը ... են:
4. Կաղնին, ուռին, սալորին ... են:
5. Պայքանը, Հեմալայան ... են:
6. Արտոյան ու արագիլը ... են:
7. Հարինն ու տառեխը ... են:
8. Հարբուխը, շերմը, հիւժախտը ... են:
9. Արբեցումիւնը, ծուլումիւնը, ստախոսումիւնը ... են:
10. Գուռը, սէրը, վեհանձնումիւնը ... են:
11. Մոնկոլները, Զինացիները, Ռուսերը ... են:
12. Խալամումիւնը, հրէումիւնը, բրիտանումիւնը, կապաշտումիւնը ... են:

28. Որո՞ցեցէք բնական եւ արուեստական նիւթերը : Ապակի, հանքածուխ, կիւնտն, ծուղթ, տուզտ, շաքար, խունկ, կիր, մելան, պնակ, բեճեզ, զմրուխտ, զինի, պղպեղ, սնդուս, բուրդ, Թիճեղ, կաշի, կոճակ, բամպակ, սեկ, տորոն, կղմիւնար, կրանիդ, շաղպի, աղիւս, կուպր, վանդակ, խիճ, կիճ, շիշ, պաղլեղ :

11. Ո՞ր բայեր Զարտուղի են : — 12. Ո՞ր բայեր Անկանոն են : — 13. Ըսէ՛ք Զարտուղի եւ Անկանոն բայերը :



9. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

29. Հարցումներուն պատասխանեցէ՛ք.

1. Ե՞րբ Յոքնակի է Գոյականը :
2. Ե՞րբ Յոքնակի է բայը :
3. Ի՞նչպէս Յոքնակի կ'ըլլան Էական Դերանունները :
4. Ա՞մականն են ալ եզակի եւ Յոքնակի ունին :
5. Մակբայները Թիւ ունին :
6. Նախադրումիւնները Թիւ ունին :
7. Բայերը կը հոլովուին :
8. Մակբայներն ու Նախադրումիւնները կրնան հոլովուիլ :

30. Սահմաններուն համապատասխանող բառը գտէ՛ք. (Գ. Վրժ. էջ 63, Հրահ. 60) :

1. Օղակներ, ձող, հաստատուն ձող, սանդուխ, վերելակ, չուան, գունտ, զլան, եւալին, 2. Մարմինին ուղեւայլ շարժումները կ'ուժովցնեն դնդերներն ու շիղերը, կը զի՛րացնեն արիւնին շրջարեւումիւնը, եւ մարմինին կուտան առուզումիւն, դիւրաշարժումիւն, կորով, առողջումիւն :
3. Մարմինին մէջ գտնուող միւսերը կամ մասնները, — Գլուխի ոսկորը, — Շարժում առձող Թելեր, — Արիւնի խողովակներ, — Ողնաշարի մէջ գտնուող կակուղ հիւթ, — Մարմինին ոսկորներու ամբողջումիւնը :
- 4.

Գանկ, կողեր, բազկուկը, արմուկոսկր, կոնք, բարձ կամ գիստի ոսկոր, ողնաշար, ոլոք եւ խոչակոսկր: 5. Լոք կամ սեպէ, պողիպող, լորտու: 6. Կմախք չունեցող կենդ անի (թոյլ սար) որ կ'ըսուի նաեւ կակղամորթ: 7. Երկակենցաղ:

31. Ընէք ո՞ր բաներ ունենալու եմ սա յաակութիւններ. (Գ. Վարժ. էջ 64, Հրահ. 61):

- 1. ... օգուէտ ըլլալու է: — 2. ... սննդարար ըլլալու է: —
- 3. ... առողջարար ըլլալու է: — 4. ... մաքուր ըլլալու է: — 5. ... վայելուչ ըլլալու է: — 6. ... սուր ըլլալու է: — 7. ... հաւատարիմ ըլլալու է: — 8. ... աշխատասէր ըլլալու է: — 9. ... յարմար ըլլալու է: — 10. ... ուղիղ ըլլալու է:



10. ԴԱՍ. — ԲԱՅԵՐՈՒՆ ՏԵՍԱԿԵՆԵՐԸ

14. Վեց տեսակ բայ. — Բայերը վեց տեսակ են. էական, Ներգործական, Չեզոք, Կրաւորական, Անզոյական, Միադէմ:

15. Էական բայը. — էական կ'ըսուի եՄ բայը որուն աներեւոյթն է ըլլալ, և վիճակ, գոյութիւն կը նշանակէ: Միւս բայերը ասոր օգնութեամբ կը կազմուին:

16. Ներգործական է այն բայը որուն հետ կը գըտնուի Սեռի խնդիր մը: Ներգործական բային տէրը ուրիշի մը (Սեռի խնդիրն) վրայ գործողութիւն մը կը կատարէ:

17. Կրաւորական բայը Ներգործականին հակառակ ձեւն է, և կը յայտնէ թէ գործողութիւնը ուրիշի մը (Բնութեան խնդիրն) կողմէ կը կատարուի ենթակային վրայ:

Օրինակ. — Նաւաստին առաքաստ պարզեց:

Հոս՝ պարզեց Ներգործական բայ է, նաւաստին՝ Տէրբայի, առաքաստ՝ Սեռի խնդիր:

Երբ ըսեմ Առաքաստը (եկրակայ) պարզուեցաւ նաւաստին, այն ատեն պարզուեցաւ բայը Կրաւորական է:

18. Ներգործական բայը Կրաւորական կ'ըլլայ՝ ծայրը ուղի կամ աջուղի փոխելով: Սիրել-սիրուիլ, խօսել-խօսուիլ, Կարդալ-կարդացուիլ:

19. Ներգործական ձեւով խօսք մը կրնանք Կրաւորականի փոխել սապէս. Ներգործական բային Սեռի խնդիրը Կրաւորական բային ենթակայ կ'ընենք (Ուղղական հոլով) և Ներգործականին Տէրբային ալ Բացառական հոլով Բնութեան խնդիր կ'ընենք, ինչպէս վերի օրինակին մէջ:

Ուրիշ օրինակ. — Սարդը ճանճ կ'որսայ:

— Ճանճը սարդէն կ'որսացուի:

32. Սա Ներգործական խօսքերը Կրաւորական րէք:

- 1. Տղան գիրք պատուեց: — 2. Արեւը աշխարհ կը լուսաւորէ: —
- 3. Նամակը ես գրեցի: — 4. Ես բեզ չեմ մոռնար: — 5. Մենք մարդ չտեսանք: — 6. Ան բեզ շատ կը սիրէ: — 7. Մեկանը ո՞վ թափեց: — 8. Չեզ ո՞վ դրկեց: — 9. Օդին տաքութիւնը մեզ կը նեղէ: — 10. Եւս խաբեց Աղամը: — 11. Գիտութիւնը կը զարդարէ մեր միտքը: — 12. Լուսաբեր կարեց շապիկս:

33. Ո՞ր բաներ սա թերութիւններն ունենալու չեն. (Գ. Վարժ. էջ 64, Հրահ. 61):

- 1. ... մեծ ու խոնաւ ըլլալու չէ: — 2. ... վնասակար ըլլալու չէ: — 3. ... պղտոր ըլլալու չէ: — 4. ... թաց ու աղտոտ ըլլալու չէ: — 5. ... պատուած, փոշոտ ըլլալու չէ: — 6. ... գուլ կամ բուծ ըլլալու չէ: — 7. ... շատախօս, գող, ծոյլ ըլլալու չէ: — 8. ... յամառ, ըմբոստ, ապուշ ըլլալու չէ: — 9. ... ծակ, աղտոտ, նեղ ըլլալու չէ: — 10. ... խորտուբորդ, բարուտ, ցեխոտ, դարուփոս, փշաւից ըլլալու չէ:

34. Այբուբենի կարգով գրեցէք Անորո Գերանուններ:

35. Սա խօսքերն ամբողջացուցէք. (Գ. Վրժ. էջ 65, Հրահ. 62):

- 1. Ածուխը, բնածուխը, հանքածուխը, փայտը կը գործածուին ... (ինչ համար): — 2. Ճարպը, ձէթը, բարիւղը, օդային կազը, մեղրամոմը կը գործածուին ... (ինչ բանի): — 3. Կը ճանչնանք հետեւեալ ... , ճարպ, ձէթ, կարագ, խաշխաշի եղ, վարդի եղ, նուշի եղ, ընկուզի եղ,

բամպակի եղ, շուշմայի եղ . . . , եւն. — 4. Ատնցմէ՝ ձէթը, կարագը, եւն. կ'ուտուին: — 5. Ճարպը բնական եղ է, իսկ միւսները արուեստական են:

14. Քայեր բանի՞ սեսակ են: — **15.** Ո՞րն է էական բայը: — **16.** Ի՞նչ կը ցուցնէ ներգործական բայը: — **17.** Իսկ Կրաւորակա՞նը: — **18.** Ներգործական բայը ի՞նչպէս Կրաւորական կ'ըլլայ: — **19.** Ներգործական ձեւով խօսք մը Կրաւորական ձեւի փոխելու կանոնը ո՞րն է:

11. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

36. Էջ 67. Հրահ. 22ի Բայերուն Գոյական կամ Ածական ար մասները գտէ՛ք, այսպէս. — Դիւտ, մուտք, ելք, էջք, հեծանելիք, տեք, առք, խածուածք, ծուք, պագ, հաս, քոյս, մահ, եւայլն:

37. Չանագան խուսքէ տուցի՛ր. (Գ. Վարժ. էջ. 70, Հրահ. 67):

1. Սննդատու տունկ — Գետնախնձոր, բրինձ, ոլոռ. — 2. Թելուտ տունկ — Վուշ, բամպակ, կանեփ. — 3. Գունատու տունկ — Տորոն, բրբուռ:
4. Իւզային տունկ — Ձիթապտուղ, խաշխաշ, նուշ. — 5. Բուժիչ տունկ — Մոլոշ, Պանթրուենի, անանուխ, երիցուկ: — 6. Խնկահոտ տունկ — Կենամոն, մեխակ, սխտոր, պղպեղ, կոճապղպեղ: — 7. Թուշաւոր տունկ — Մեկոն, մոլեխինդ, ակնբոստն (կամ ընձախոտ):

38. Խոնարհեցէ՛ք սա բայերը՝ միասին:

Կ'ուտեն եւ ապա կը գրհանամ, կ'ուտես եւ ապա կը գրհանաս, եւն.:

39. Սա Ածականներուն կցելով պէս, քար, գին մասնիկները՝ Եղանակական մակբայի փոխեցէ՛ք.

1. Մեծ, յատուկ, վերջ, նախ, առատ, մասնաւոր, ծանր, դառն, անկեղծ: — 2. Քաշ, ստրուկ, հեզ, խօլ, սաստիկ, վեհանձն, լուրջ, սովոր, վատ: — 3. Ուժ, անձուկ, եռանդ, մոլի, ջերմ:

12. ԴԱՍ — ԲԱՅՅԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ (Շար.)

20. Ձեզոք բայը ինք իրեն կատարուած գործողութիւն մը կը յայտնէ՝ որ ուրիշին չ'ազդէր եւ ուրիշէն չ'ազդուիր:

21. Անցողական բայ. — Անցողական է այն բայը՝ որուն գործողութիւնը ենթական ուրիշի մը կատարել կուտայ:

Անցողական բայը կը շինուի Ներգործական և Չեղք բայերէն, ցնէր կամ եցնէր վերջաւորութեամբ՝ որ կը կցուի բայերուն արմատին:

Անցողական կը շինուի նաեւ սալ բայով: Օրինակ. — Միբել-սիրցնէր, խօսիլ-խօսեցնէր, կարդալ-կարդացնէր, մեռնիլ-մեռցնէր, լալ-լացնէր:

Կամ՝ գրել-գրէր սալ, կը բերենք-բերէր կուսակ, կ'երգէն-երգէր կուսակ, եւայլն:

22. Միադէմ բայ են անոնք որ յայտնի և որոշ Տէր բայի չունին և միայն Եզակի Գ. Իէմքով կը գործածուին ամէն ժամանակի ու եղանակի համար: Մասնաւորապէս օգլին վիճակը ցոյց տալու համար կը գործածուին: Անձներեց, պիտի ձիւնէ, կը մքնէ, սասիկ ցուրս է: Միադէմ են նաեւ սա ձեւ բայերը. Կը կարծուի, կ'ենթադրուի, կ'երեւայ, պիտի է, հարկ է, քաւական է:

40 Հետեւել 5 սեսակ բայերը մէյնէկ խօսքի մէջ գործածեցէ՛ք.

1. Խեղդել, սծիլել: — 2. Մեռնիլ, տաքնալ: — 3. Խեղդուիլ, ածիլուիլ: — 4. Հոգցնել, տաքցնել: — 5. Խեղծ է, կ'երեւայ, կը վայել, անկարելի է, հուսանական է:

41. Ամբողջացուցէ՛ք սա խօսքերը. (Գ. Վարժ. էջ 69, Հրահ. 66):

1. Քրոջը գործիք մ'է որով . . . : — 2. Հովանորը գործիք մ'է որով . . . : — 3. Ջրոնը երկամէ զգեստ մ'է զոր . . . : — 4. Վասնը երկամէ կրը գործիք մ'է որով . . . : — 5. Բարանը գործիք մ'է որով . . . : — 6. Աղեղը գործիք մ'է որով . . . : — 7. Սաղաւարտը գործանակաւոր գլխարկ մ'է զոր . . . :

42. Սա Յասկացուցիչներուն եով մէյնէկ Յասկացեալ դէ՛ք.

1. Արծիւին . . . : 2. Թռչունին . . . : 3. Խունկին . . . : 4. Եպիսկոպոսին . . . : 5. Ոտքին . . . : 6. Աչքին . . . : 7. Տափատին . . . : 8. Ծառին . . . : 9. Գրքին . . . : 10. Ոսկին . . . : 11. Պատին . . . : 12. Վարդապետին . . . :

20. Ի՞նչ կը յայտնէ Ձեզոք բայը: — **21.** Ի՞նչ կը յայտնէ անցողական բայը: Ի՞նչպէս կը փնտռի, (օրինակ տուէ՛ք երկու կերպէն ալ): — **22.** Ո՞ր բայեր միադէմ են:

13. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳԵՐ

43. Սա հարցումներուն պատասխանեցէք.

1. Բայերը բանի Լծորդուծիւն ունին. — 2. Որոնք են Բային եղանակները. — 3. Անորոշ եղանակը բանի ձև ունի. — 4. Անորոշ եղանակը Թիւ, դէմք եւ ժամանակ ունի. — 5. Հրամայական եղանակը բանի ժամանակ ունի. — 6. Բացարձակ Ապառնին եւ Ստորադասականը Սահմանական եղանակի որ ժամանակին պէս է. — 7. Ի՞նչ տարբերութիւն կայ Սահմանական անկատարին, Ապառնի անկատարին եւ Ստորադասական անկատարին մէջ :

44. Սա խօսքերն ամբողջացուցէք. (Գ. Վարժ. էջ 71, Հրահ. 68) :

1. Կայծբարը քար մ'է որ ... : — 2. Կարժառը գործիք մ'է որուն վրայ ... : — 3. Նրբընկալը գործիք մ'է որուն վրայ ... : — 4. Մաքորը կամ կկոցը գործիք մ'է որով ... : — 5. Թակն ու աղեղը երկու գործիք են որոնք ... :

45. Հարցումներուն պատասխանելով խօսքերն ամբողջացուցէք. (Գ. Վարժ. էջ 72, Հրահ. 69) :

1. Երկիրը կը հերկէ (հվ) : — 2. Փայտ կը տաշէ (հվ) : — 3. Միս կը ծախէ (հվ) : — 4. Փայտ կը ջարդէ (հվ) : — 5. Նամակ կը տանի (հվ) : — 6. Յորեն կը ցանէ (հվ) : — 7. Դատ կը վարէ (հվ) : — 8. Դարման կը խնդրէ (հվ) : — 9. (Որոնք) պարտին մեծարել իրենց ծնողն ու վարձապետը : — 10. Հողը կը փորէ (հվ) : — 11. Ծառին վրայ բոյն կը շինէ (հվ) : — 12. Հաւերը կը խեղդէ (հվ) որ կենդանին : — 13. Ժամերը կը նշանակէ (որ գործիքը) : — 14. Իր ուսկանը ծովը կը ձգէ (հվ) : — 15. Մեղր կը շինեն (որոնք, որ միջատները) : — 16. Աշխարհ կը լուսաւորէ ու կը տարցնէ (որ աստղը) : — 17. Իր ոչխարները կ'արածէ (հվ) :

46. Որո՞նքն են որն ու էգ կենդանիները՝ զոս զոս գրելով.

Ոչխար, արջաղաղ, առիւծ, զամբիկ, ձի, կով, եղ, շուն, ցուլ, բաժ, այծ, մաքի, եգ, նոխազ, վարուժան, մարի :

14. ԴԱՍ. — ԿՈՉԱԿԱՆ

23. Կոչական. — Մէկը կանչելու համար, անոր անունը կուտանք, այսպէս .

Միևրան, հոս եկուր : — Փառք քեզ, Աւսուած : Այն անունը որ այսպէս կանչելու կը ծառայէ, կ'ըսուի Կոչական :

24. Կոչականին հոլովը. — Կոչական բառը, (Անուն կամ Գոյական) միշտ Ուղղական հոլով կ'ըլլայ :

25. Աճումն առաւելայ նշանակող անուններն ալ կըրնան Կոչական ձևով գործածուիլ. Օրինակ. — Գե՛ս, մի՛ դարհուրիւր : Ո՛վ սիրելի՛ ծննդալայրս, քեզ կրնամ մոռնալ :

47. Սա խօսքերն օրինակեցէք, Կոչականներուն սակ զի՞մ քաւելով :

1. Աստուած, ներէ իմ մեղքերուս : — 2. Հայրիկ, ինձի Թերթ մը Թուղթ տուր : — 3. Ինչոք կեցցէք, տղար : — 4. Արեւ, արեւ, դուրս ելիւր : — 5. Եկուր ինձի, սէր իմ Թաչիկի : — 6. Ի՛նչ անուշ եւ ի՛նչ պէս զով կը փչես, հովիկ : — 7. Ո՛վ մեր Հայրը որ երկինքն էս, Քու անունդ Սուրբ Թող ըլլայ : — 8. Հոս եկուր, տեսն աղարար : — 9. Մայրիկ, սիրելի մայրիկ, ալ սակէ ետքը քեզ չսիրտի վշտացնես : — 10. Երջանի՛դ օրեր, ի՛նչ ալ շուտ կ'անցնիք : — 11. Աղջիկ, քեզի կ'ըսեմ, հարսնուկ, դուն լսէ :

48. Սա խօսքերն ամբողջացուցէք. (Գ. Վարժ. էջ 73, Հրահ. 70) :

1. Բուստը, մարգարիտը, գաղտակուրը, ոստրէն, ձուկը բերբեր են որ ... (ուսկից կ'ելլեն) : — 2. Հաճարն ու սունկը ... (ինչ տեսակ տունկ են) : — 3. Բամբակն ու վուշը ... (ինչ տեսակ տունկ են) : — 4. Տորոնք եւ բրբուրը ... (ինչ տեսակ տունկ են) : — 5. Խաշխաշը, շուշման (ինչ տեսակ տունկ են) : — 6. Մոլոլը, Թէյը, Թանձրուենին (ինչ տեսակ տունկ են) : — 7. Հալուէն ու գժուսը (ինչ տեսակ տունկ են) : — 8. Մոլեխինդն ու ընձախտը (ինչ տեսակ տունկ են) :

49. Որո՞նքն են արմշիք, բանջարեղէն եւ ընդեղէն.

Ոսպ, ցորեն, Թրձնուկ, անուխ, սոխ, բակլայ, սխտոր, ձաւար, լուբիա, գարի, եգիպտացորեն, ռահան, սունկ, ոլոս, սիսեռ, պղպեղ, լոլիկ, հաճար, սամիթ, չաման, պտտինճան (սմբուկ), ստեպղին, կաղամբ, կոտեմ :

50. Հարցումներուն պատասխանեցէք եւ ըսէք քէ ի՞նչ են. (Գ. Վարժ. էջ 74, Հրահ. 71) :

1. Անուծ : — 2. Արմուկ : — 3. Թօղ : — 4. Ծածրակ, անրակ : — 5. Թորք : — 6. Ստամբուս : — 7. Երակ : — 8. Կուտկէն : — 9. Դմակ :

23. Ի՞նչ է Կոչականը : — 24. Ի՞նչ հոլով կը դուրի Կոչական Անունը կամ Գերանունը : — 25. Ուրի՞նչ անուններ կրնան Կոչական ըլլալ :

15. ԳԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՅ ՕԴ Մ'ԸԼԼԱՐ...

«Ախ, ո՛ր էր որ բաց օդ մ'ըլլար,
 Կ'ըսէր քիթեռ մը քեթեւ,
 Ասանկ սմբած չէի մընար —
 Թափ կուսայի, կ'առնէի քեւ՝
 Գաշտեռուն մեջ ծաղկով լեցուն
 Ման կուգայի ես ցնծուն:

— Ե՛ս ալ, կ'ըսէր, մեղու մը ժիր,
 Բաց օդ կ'ուզեմ որ է՛ս ալ
 Գործիս նայիմ ամեն ի ժիր.
 Ուրիշէն բան չյուսալ
 Ապաւինիլ ջանքիս միճակ՝
 Ըսկզբունքս է, քի՛թեռնակ:

Թարգմ.

- 51. Որոշեցէք Բայերն ու Տերբայիները:
- 52. Վերլուծեցէ՛ք նոյն հասուածին երկրորդ տունը:
- 53. Հետեւեալ բայերը ներգործական են: Չանոմք Կրաւորական քրէ՛ք՝ վերջաւորութիւնը ուիչ կամ աջուիչի փոխելով.
 Բարոքել, ուողել, գարդարել, անցնել, հասցնել, նեղել, ըսել, տարածանել, զոգնալ, զրդուել, խաշել, ընկնել, որսալ, զիտնալ, գտնել, մանել, կարկտել, հաւնիլ, զարնել, բանալ, ուտել, տալ (տրուել), ղնել (զրուել):

16. ԳԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

- 54. Սա բառերուն սահմանը տուէ՛ք. (Գ. Վարժ. էջ 75, Հրահ. 72):
 1. Չգախէժ. — 2. Կարկիս: — 3. Ծեփիչ: — 4. Մանգաղ: — 5. Կարկան: — 6. Հնոց:
- 55. Ո՞ր Յարաբերականին գործածութիւնը.
 1. Ահա արեւը որ աշխարհ կը լուսաւորէ: — 2. Ահա արեւը որուն

ճառագայթները կը խողտացնեն մեր աչքերը: — 3. Յնա արեւը, որուն կարօտ ենք: — 4. Ահա արեւը, զոր հիւները կը պաշտէին: — 5. Ահա արեւը, որովք լոյս ու ջերմութիւն կը բոխի: — 6. Ահա արեւը որով կ'աճին կ'ուճանան ծառ ու ծաղիկ:

(Վերի օրինակին պէս Ու Յարաբերականը 6 հոլովներով գործածեցէ՛ք երկերկու անգամ:)

56. Սա բայերն Անցողական քրէ՛ք՝ ցնել վերջաւորութեամբ.

Գրտնիլ, բռնկիլ, ուտել (կեր...), քնանալ, մոռնալ, անցնիլ, վազել, պոճկալ, հասնիլ, խաղալ, զողնալ, դառնալ, վախնալ, զիտնալ, մտնել, մտնեալ, հագնիլ, հոսիլ, մաշիլ, լսել, մեռնիլ, սահիլ, հալիլ, վայել, գիտնալ, պառկիլ, բռնալ, հեծնել, իջնել, երբալ, երեւալ, փայլիլ, բրբրել, խզնիլ, վերնալ, բարձրանալ, համբառնալ, վերադառնալ, անդրադառնալ, ուսնիլ, բուսնիլ:

17. ԳԱՍ. — ԲԱՅԱՅԱՑՏԵՉ ԵՒ ԲԱՅԱՑՏԵՍԱԼ

26. Բացայայտիչ. — Երբեմն խօսքի մէջ անունի մը ո՛վ կամ ի՛նչպէս ըլլալը բարատրելու համար ուրիշ անուն մը կը կցենք. Օրինակ. — Մեր եկեղեցիին ֆարոգիչը՝ Խոսրով վարդապետ՝ հիւսնոյ է: — Յիսուս՝ մեր փրկիչը՝ աշխարհ եկաւ Բեթղեհեմի մէջ:

Աս խօսքերուն մէջ՝ Մեր եկեղեցիին ֆարոգիչը և մեր փրկիչը բառերը աւելի ազէկ՝ բացայայտ կը հասկցնեն թէ ո՛վ է Խոսրով վարդապետ և ո՛վ է Յիսուս:

27. Բացայայտեալ. — Բացայայտիչ ունեցող բառը կը կոչուի Բացայայտեալ, ինչպէս վերի Խոսրով վարդապետ և Յիսուս բառերը:

Ու նոյն իսկ Խոսրով վարդապետ բառերն ալ իրարու Բացայայտիչ ու Բացայայտեալ են:

57. Սա խօսքերն օրինակեցէ՛ք՝ ստորագծելով Բացայայտիչները.

- 1. Մեր գեղին մըխաղը՝ Թորոս աղա՝ փորձաւոր ձերուկի մ'է: —
- 2. Մեր տաներէցը՝ Տէր Գէորգ, բարի բահանայ մ'է: — 3. Ոչխարը՝ այդ հեզ կենդանին՝ մեզի կուտայ իր բուրբը, կամը, եւայլն: — 4. Ներսէս

Շնորհալի Կաթողիկոսը սպրեցու ժժ. դարուն — 5. Մայր եկեղեցին Գուժ Գարուի մէջ է: — 6. Հիւանդանոցի հիմնադիրը Պէգճեան Յարութիւն Ամիրան է: — 7. Շուքը՝ այդ հաւատարիմ կենդանին՝ մեր ոչխարները կը պահպանէ:

58. Սա բառերուն սահմանը տւե՛ք. (Ք. Վրժ. էջ 79, Հրահ. 76):

- 1. Մարգարէ, զուշակ, — 2. Հեռադիտակ, — 3. Մանրագէտ, — 4. Ջերմաչափ, — 5. Փարոս, — 6. Կողմնացոյց, — 7. Շանձարգել:


59. Նախադուրբիւններուն Դերանուն խնդիր փոխեցէ՛ք եւ սեղը դրէ՛ք Գոյական խնդիրներ՝ միեւնոյն հոլովով. Օրինակ. — Անոնց ներքեւ. — Արտոյի ներքեւ:

- 1. Անոնց ներքեւ, մեր դիմաց, իմ սոգեւ, սառ ետեւ, անոր վրայ, մեր մէջ, անոնց տակ, — 2. Ինձի համար, ինչի հետ, անոր դէմ, մեզի չափ, անոնց մօտ, մեզի պէս, — 3. Ինձմէ գատ, անկէ ի վեր, մեզմէ դուրս, — 4. Միևնջեւ անոնք, դէպի բզոյ:

60. Որո՞նցէ՛ք քաղեր եւ մեծադներ:

Պրինձ, արամանդ, զմբուխտ, անագ, շափիւղայ, սնդիկ, ապառաժ, կրանիդ, սուտակ, փերուզակ, կրաքար, գայլախագ, բիւրեղ, խիճ, անագ, երկամ, զառիկ, կապար. արծաժ, ոսկի:

26. Ի՞նչ է բացայայտիչը: — 27. Ի՞նչ է բացայայտեալը:



18. ԳԱՍ. — ՇԱՂԿԱՊ.

28. Շաղկապ կ'ըսուին այն բառերը որ երկու բառ կամ երկու խօսք իրարու կը կապին:

Օրինակ. — Ծով ու ցամաք: Կե՛ր, երբ անօթի ես: Կ'ուզեմ որ մարդ ըլլաս:

Աս խօսքերուն մէջ ու, երբ, որ բառերը Շաղկապ են:

29. Գլխաւոր շաղկապներն են. — Ու, եւ, թե, երբ, քիեւ, որ, երբ, ո՛չ թե, բայց, կամ, մանաւանդ, որովհետեւ, ինչու որ, իսկ, որպէս զի, ալ, քան թե, եւայլն:

30. Եփօրելու չէ. — Որ Յարաբերական դերանունը չփոխելու չէ որ Շաղկապին հետ:

Աշխատէ՛ որ ուտես. (հոս Շաղկապ է):

Քարը, որ կարծր մարմին է, կը գործածուի տուն չինելու. (հոս՝ որ բառը Յարաբերական դերանուն է):

31. Դոյնպէս. չշփոթել՝ ա՛յ Շաղկապը (որ Գոյականին և Դերանունին քով կը դրուի), և ա՛յ Մակբայը (որ Բային քով կը դրուի):

Հա՛յրս ալ, ե՛ս ալ վազը գեղ կ'երթանք. (հոս Շաղկապ է): Ա՛յ չեմ ուզեր որ զիս սիրես. (հոս՝ ալ բառը Մակբայ է):

61. Սա խօսքերն օրինակեցէ՛ք՝ Շաղկապներն ստուգածելով.

- 1. Եթէ անօթի ես, հոց կեր: — 2. Շունն ու կատուն ընտանի կենդանի են: — 3. Զուր խմէ քանի որ ծարաւ ես: — 4. Մարդ եւ անասուն շնչաւոր են: — 5. Կը պառկիմ երբ որ բունս գայ: — 6. Պատուհանը զոցեցի, ինչու որ օղը ցուրտ է: -- 7. Կօշիկը հանէ, որովհետեւ ցեխտ է: — 8. Շատ աշխատելու ես, մոնաւանդ հայերէնի զատիդ: — 9. Առողջութեանդ հոգ տար, որպէս զի չհիւընդաս: — 10. Աւելի լաւ է խաղալ քան թէ անգործ ու պարտապ նստիլ:

28. Ո՞ր բառեր շաղկապ են: — 29. Որո՞նք են Շաղկապները: — 30 եւ 31. Ի՞նչ գիտէ որ եւ ալ առերուն վրայ:



19. ԳԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

62. Սա բառերուն սահմանը տւե՛ք. (Ք. Վրժ. էջ 80, Հրահ. 77):

- 1. Մժնուրտ, — 2. Երկնաքար կամ օդաքար, — 3. Օղբերելոյժ: — 4. Ատուպ: — 5. Արբանեակ, — 6. Ծիածան, աղեղ, նշանակ, — 7. Առանցք, Ծղիմի: (Այն կէտը որուն վրայ կը դառնայ մարմին մը):

63. Հետեւեալ բայեր ի՞նչ տեսակ են՝ Էական, Ներգործական, Կրաւորական, Չէզո՞՞ք, Անցողական թէ Միադէմ:

Կերաւ, մտնել, բնացանք, գացին, կ'առնուի, կարելի է, մտցուր, հանցի, խոստովանէ, պատմեցի, ստանալ, մուրաց, զովուցաւ, կերցուցի, չ'ուտուիր, կը լզէ, լուցէք, պառկէ, ելէք:

64. Սա բառերը իրեն բնութեան խնդիր գործածեցէ՛ք մէյմէկ խօսքի մէջ: (Ք. Վարժ. էջ 90, Հրահ. 87):

- 1. Իր սիրոյ: — 2. Գիշերուան: — 3. Չիւնով: 4. Զրահով: — 5.

Ծառին վրայ — 6. Արևուն — 7. Որդերով, բոյ երով, հատիկներով —
8. Կաթով — 9. Իր Ձնամիններուն — 10. Իր զակիին — 11. Իր
մօրը — 12. Թշուառութեան — 13. Քամէն — 14. Դրախտէն:

20. ԿԱՍ. — ՁԱՅՆՆ՝ԿՈՒԹԻԻՆ ԿԱՄ ՄԻՋԱՐԿՈՒԹԻԻՆ

32. Չայնարկութիւն կամ Միջարկութիւն կ'ըսուի այն
բառը որ վախ, շարունակ, բարկութիւն, փախախտ, գղջուռ,
ուրախութիւն, զգուռակ, եւ այլն կը յայտնէ:

Օրինակ. — Մե՛ղբ որ դասող չես գիտեր: — Օ՛ն,
քե՛ղ տեսնեմ, ասկէ ետքը աղէկ աշխատէ:

33. Չայնարկութիւններն են. — Ա՛խ, վա՛խ, ո՛հ,
ե՛հ, ա՛յ, վա՛յ, սաւն, ափսո՛ս, երանի՛ք թէ, իցի՛ւ թէ,
մե՛ղբ, ո՛վ, ժն, կեցցե՛ք, կեցցե՛ս, եւ այլն:

Միջարկութիւն կ'ըսուի անոր համար որ խօսքին մէջ
կը գրուի անանց իմաստին հետ կապ ունենալու:

65. Օրինակեցէք սա խօսքերն՝ ստորագծելով Միջարկութիւնները:

1. Երանի՛ հեզերուն — 2. Մե՛ղբ, մե՛ղբ որ ժամանակդ պարսպ
կ'անցընես — 3. Ապրիս, տղաս — 4. Օ՛ն, եկէք զբօսանքի իշները —
6. Աւա՛ղ, մեռեր է խեղճ տղան — 7. Ա՛յ չարածճի, դ՛նւ ալ հոս ես ե-
ղեր — 8. Ա՛հ, մէյմը գարունը զար: — 9. Կեցցե՛ մեր ուսուցիչը — 10.
Անէ՛ծր մարդասպանին — 11. Վա՛յ անպիտան, մատիտս կորսուեր է:

66. Վերոյիշեալ Չայնարկութիւնները զատեցէ՛ք՝ որոշելով թէ
ի՛նչ կը յայտնեն՝ ցա՛ւ, երկի՛ւղ, զարմա՛ցեմ, փափա՛ւ, եւ այլն:

32. Ի՞նչ է Չայնարկութիւնը: — **33.** Որո՞նք են Չայնարկու-
թիւնները: Ինչո՞ւ Միջարկութիւն ալ կ'ըսուին:

Մ Ո Ւ Ց Ո Ւ Ա Վ

Էջ 63, Մայրենի լեզուի 12րդ Հրահանգին սկիզբը
4. ԿԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԽՐՐԱԳԻՐը մոռցուած է:

«Ազգային գրադարան



NL0240174

ՆՈՐ ԴՊՐՈՅ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10. — Դպրոցական տարին 10 ամիս ըլլալով՝ ՆՈՐ ԴՊՐՈՅն ալ տասը Պրակներու բաժնուած է, մէն մի ամսուան համար մէկ Պրակ :

Ամէն մէկ Պրակ պիտի ըլլայ առ նուազն 5—6 տպագրական թերթ կամ 80—100 էջ : Պիտի պարունակէ, նիւթերուն համեմատ, գեղեցիկ պատկերներ՝ մեծ մասը յատկապէս ՆՈՐ ԴՊՐՈՅի համար փորագրուած :

20. — ՆՈՐ ԴՊՐՈՅի 10 Պրակներու բաժանորդացինն է

Պոլսոյ եւ Գաւառներու համար **25 Ղ.Ղ.**

Արտասահմանի համար **8 Ֆրանկ կամ 3 Բուպլի**

30. — Գաւառները զրկուած Պրակներու փոսթի ծախքը Գործակու-
լուծիւնը կը հոգայ :

40. — Տասն օրինակի բաժանորդ զրուողը 1 օրին. նուէր կը ստանայ :

50. — Մէկ Պրակի գինն է 5 (հինգ) դրուշ :

60. — Պրակ առ Պրակ գնողին գեղջ չկոյ :

70. — Տասը Պրակներն աւթողջանալուն պէս, պիտի զտորի բաժա-
նորդագրուծիւնը եւ այն ատեն անոնց գինը պիտի ըլլայ 50 դրուշ, 12
Քրանք, 5 րուպլի, բացի փոսթի ծախքէն :

80. — Պրակները պիտի ըլլան ամսական, երեք ամսական միտցած,
կամ 5 ական Պրակով 2 հատոր :

ՆՈՐ ԴՊՐՈՅի Ա. Պրակը «Բիւրակն ի 1900 թիւ 33—40ին մէջ իբր
նմոյշ հրատարակուած ըլլալով՝ այլ եւս այս կամ այն Պրակն նմոյշ չենք
զրկեր որ եւ է անձի, մասնաւոր դր. միակ Պրակի մը պ ս'սկելովը ամբողջ
Հաւաքածուն կը խանգարի ի վնաս Բաժանորդի մը :

Տպագրութիւնը, պատկերները, Սուղթը, կաղմը, նիւթերու բուշ-
խումը եւ տառերու ըն որուծիւնը կատարուած է մասնաւոր խնամով :

Աշակերտներու զիւրուածեան համար, Ուտոցիճ' երը կրնան, փոխա-
նակ 25 դրշ. բաժանորդացիներ մէկ անգամէն գանձելու, շտաբակների
զրուածեամբ ըրջ քիչ հաւաքել եւ երբ 25 դրուշն ամբողջանայ, այն ատեն
մեղի հասցնել՝ միշտ ջանալով 10 ս'կան բաժանորդացիին մէկէն զրկել,
11րդ օրինակի մը նուէր ստանալու համար :

استانده سرکه حیده خوراسانجیان خاندہ سہیاط داودیان

Հասցէ. — ՍՄԲԱՏ ԳԱՒԹԵԱՆ

5 Փետրուար 1902

Խորասանձեան խան, Սիրիճի, Կ Պոլիս